

## ԹՈՒՐՔ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՄՏԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԱՅՏԱԾ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԳԾԻ ՇՈՒՐՁ

Թուրքիոյ խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Մուրատ Մերճան Փետրուար 16-ին Անգարայի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան ձէյմս ձէֆրիի հետ հանդիպման ժամանակ փոխանցած է իր երկրի մտահոգութիւնները ամերիկեան Գոնկրէսէն ներս շրջանառուող՝ Հայոց Յեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի նախագծի շուրջ:

«Մենք ըսինք Միացեալ Նահանգներու դեսպանին, որ թուրք - ամերիկեան յարաբերութիւնները մեծ հարուած կը ստանան, եթէ 1915 թուականի իրադարձութիւններուն վերաբերող օրինագիծը քննարկման դրուի Գոնկրէսէն ներս եւ ընդունուի Ներկայացուցիչներու Տան կողմէ», - հանդիպումէն յետոյ լրագրողներուն ըսած է Մերճան:

Դեսպանը խոստացեր է փոխանցել թրքական կողմի մտահոգութիւնները ԱՄՆ-ի Ներկայացուցիչներու Տան եւ վարչակազմին:

Թուրքիոյ խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի անդամներու հետ հանդիպումէն առաջ դեսպան ձէֆրի լրագրողներուն ըսած է, որ Միացեալ Նահանգները լիովին կը սատարէ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին:

## ՇՈՒԷՏԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՊԻՏԻ ՔՈՒԷԱՐԿԵ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻ

Շուէտի խորհրդարանը կը պատրաստուի քուէարկել Օսմանեան կայսրութեան մայրամուտին հայերու, ասորիներու եւ խալտերու ջեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի նախագիծ: Այս մասին կը հաղորդէ թրքական «Զաման» թերթը:

Նկատի ունենալով որ Սեպտեմբերին Շուէտի մէջ տեղի պիտի ունենան խորհրդարանական ընտրութիւններ, մինչ այդ խորհրդարանը պէտք է յստակացնէ արդէն իսկ շրջանառութեան մէջ գտնուող օրինագիծերու ճակատագիրը: «Զաման»-ի աղբիւրներու վկայութեամբ՝ Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ բանաձեւին Շուէտի խորհրդարանը պիտի անդադրառնայ երկու շաբթուայ ընթացքին:

Թուրք պաշտօնեաները եւ քաղաքական գործիչները զգուշացուցած են Շուէտի իշխանութիւնները, թէ նման բանաձեւի քուէարկութիւնը կը վնասէ երկկողմ յարաբերութիւններուն եւ կը դժուարացնէ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ ստորագրուած արձանագրութիւններու վաւերացումը:

## ԵՒԱ ՌԻՎԱՍ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԸ



Երգչուհի Եւա Ռիվաս

Երեւանի մէջ աւարտեցաւ «Եուրոտեսիլ» 2010» երգի միջազգային մրցոյթի ընտրական հանգրուանը: Երգչուհի Եւա Ռիվաս իր «Apricot Stone» («Ծիրանի Կորիզ») երգով ստացաւ հեռուստադիտողներու ձայներուն մեծամասնութեան:

«Ես չեմ հաւատար» եղաւ Տոնի Ռոսթով ծնած 22-ամեայ երգչուհիի արձագանգը:

Սակայն, մրցոյթի արդիւնքները դժգոհութիւն չառաջացուցին էմմի եւ Միհրան գոյգի համակիրներու մօտ, որոնք բողոքի ցոյցեր կազմակերպելով ամբաստանեցին Հայաստանի հանրային հեռատեսիլը՝ ժողովրդային քուէարկութիւնը կեղծելու մէջ:

Յայտնենք որ դատական կազմի անդամներու նախընտրութիւնը եղած է յօգուտ էմիի եւ Միհրան գոյգին:

## ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՍԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ



Սերժ Սարգսեան հարցազրոյց կ'ունենայ լրագրող Տէյվիտ Ֆրոսթի հետ՝ «Ալ-ժազիրա» հեռատեսիլէն

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեան Փետրուար 15-ին շրջանառութեան մէջ դրած է հայ-թրքական յարաբերութիւններու զարգացման եւ երկու երկիրներու միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու ձգտող արձանագրութիւններու թղթածրարը եւ որպէս գլխադասային յանձնաժողով նշանակուած է արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովը:

Անցեալ շաբաթ Լոնտոնի Միջազգային յարաբերութիւններու թագաւորական հիմնարկէն ներս ունեցած ելոյթի ժամանակ Սերժ Սարգսեան յայտարարած էր, որ որպէս Հայաստանի խորհրդարանական մեծամասնութիւն կազմող կուսակցութեան ղեկավար, «բացառում է արձանագրութիւնների վաւերացման տապալումը Հայաստանում»: Ան, սակայն, ընդգծած էր. - «Բայց եթէ հաստատուեն կասկածները, թէ Թուրքիան փորձում է ընդամենը ժամանակ ձգել, մենք ստիպուած կը լինենք դադարեցնել գործընթացը»:

Լոնտոնի գտնուելու ընթացքին Սարգսեան հարցազրոյց ունեցած է արաբական «Ալ-ժազիրա» հեռատեսիլի անգլերէն հաղորդումէն: Ուրբաթ, Փետրուար 12-ին հեռարձակուած հարցազրոյցի ընթացքին, Սարգսեան

երաշխաւորած է Արձանագրութիւններու վաւերացումը խորհրդարանին կողմէ: Ան ըսած է որ, ոչ միայն Հայաստանի, այլեւ բոլորի համար ալ տարօրինակ է, որ թրքական կողմը կը մեղադրէ Հայաստանին՝ գործընթացը ձգձգելու մէջ: «Միանշանակ է, որ այն յետաձգողը թուրքերն են», - ըսած է Սերժ Սարգսեան:

Հարցին, թէ որքանով կարելոր է սահմանի բացումը այլ երկիրների, օրինակ՝ Ռուսաստանի ու ԱՄՆ-ի համար, եւ ինչպիսի՞ն են Հայաստանի յարաբերութիւնները այդ գերտէրութիւններու հետ, Սերժ Սարգսեան պատասխանած է, որ թէ՛ ԱՄՆ-ը, թէ՛ Ռուսաստանը եւ թէ՛ Եւրամիութիւնը կ'աջակցին գործընթացին, քանի որ «խնդիրը միայն սահմանը բացելը չէ, այլ յարաբերութիւնները կարգաւորելը, ինչը կարելոր է բոլորի համար»:

Սարգսեան ըսած է որ, Հայաստանն ու Ռուսաստանը ռազմավարական գործընկերներ են, իսկ Միացեալ Նահանգներու մէջ կ'ապրին բազմաթիւ հայեր, որոնք, որպէս բնական կամուրջ, կը նպաստեն հայ-ամերիկեան յարաբերութիւններ ամրապնդման: «Մեզ համար լաւագոյն վիճակն այն է, երբ ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը լաւ յարաբերութիւնների մէջ են», - ըսած է Սերժ Սարգսեան:

## ՍԴՅԿ-ՀՅԴ-ՈՒԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Փետրուար 14-ին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան Երեւանի «Ստեփան Սապահ-Գիւլեան» կեդրոնի մէջ տեղի ունեցած է հանդիպում Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի եւ ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Սեդրակ Աճեմեանի միջեւ, որուն հեռախօսային կապի միջոցով մասնակցած է նաեւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ Մայք Խարապեանը:

Հանդիպման ընթացքին քննարկուած են Յեղասպանութեան 95-րդ տարելիցին ընդառաջ համատեղ միջոցառումներ կազմակերպելու ծրագրերը:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ  
ՀՆՉԱԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԱՏԵՆԱՊԵՏ ԳԵՈՐԳ ՊԵՐԿՈՒՊԵՐԿԵԱՆԻ ՀԵՏ

-Ինչպե՞ս էք գնահատում ներկայումս ընթացող հայ-թուրքական յարաբերությունների կարգաւորման գործընթացը:

-Պէտք է նշեմ, որ Հնչակեան կուսակցութիւնը՝ իբրեւ Թուրքիայի հետ «շփուկ» մեծ փորձ ունեցող քաղաքական կուսակցութիւն, ի սկզբանէ դէմ է եղել նմանատիպ գործընթացներին: Պատճառն ամենեւին էլ այն չէ, որ մենք դէմ ենք մեր հարեւանի հետ յարաբերութիւնների հաստատմանը: Ուղղակի մեզ համար ընդունելի չէ այն գիշեր, որ պէտք է վճարենք յարաբերութիւնների կարգաւորման համար՝ Յեղասպանութեան ճանաչման խնդիր, արցախեան հակամարտութիւն: Այս խնդիրները Թուրքիայի բարձրաստիճան պաշտօնեաները մշտապէս փորձում են կապել արձանագրութիւնների վաւերացման հետ: Մի առիթով նշել եմ ու հիմա էլ պէտք է ասեմ, որ այս գործընթացը շատ հապտակ կազմակերպուեց: Նմանատիպ ցաւոտ խնդիրները չեն լուծուում այսքան արագ: Մեր երկրների միջև վիճը շատ մեծ է, իսկ մեր ակնկալներն ու պահանջները Թուրքիայից՝ հակադաս: Արձանագրութիւնների բովանդակութիւնը նոյնպէս մեզ համար հեռու է իդէալական լինելուց:

Մէկ այլ խնդիր նոյնպէս: Տպաւորութիւն է ստեղծուում, որ գտնուում ենք աղերսողի կարգավիճակում. մի տեսակ խնդրում ենք Անկարայից՝ ինչ կը լինի, սահմանը բացի, այս խնդիրը վերջանայ գնայ: Այդպէս չպէտք է լինի: Իրենք են փակել սահմանը, իրենք են շրջափակման մէջ պահել մեր երկիրը՝ գրկանքներ պատճառելով հայ ժողովրդին: Մի խօսքով, եթէ ամբողջացնենք, չեմ կարծում, որ այս գործընթացից մեր օգուտներն աւելի շատ կը լինեն, քան վնասները:

-Ինչպե՞ս կը մեկնաբանէք ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի ուղերձը Թուրքիայի նախագահ Արդուլլա Գիւլիին եւ Լոնդոնի «Չեքքըմ Հաուս» ինստիտուտում հնչած Սերժ Սարգսեանի ելույթը:

-Նախագահ Սարգսեանի ուղերձը դիւանագիտական արարողակարգային ուղերձ էր ըստ իս: Իհարկէ, դրական էլեմենտներ ուղերձում կային, սակայն կարելի էր աւելի խիստ գտնուել: Պէտք է յատկապէս թուրքիայի հասկացուի, որ իր աւանդական «աղոճսային» դիւանագիտութիւնն այս հարցում յաջողութիւն չի ունենայ: Իսկ եթէ ունեցաւ, ապա մի հերթական սեւ էջ կը բացուի թէ՛ մեր, թէ՛ մեր սերունդների համար: Ինչ վերաբերում է լոնդոնեան ելույթին, ապա այստեղ ամէն ինչ յստակ է: Դրական եմ գնահատում Արցախի հարցում ունեցած յստակ դիրքորոշումը, սակայն վստահաւոր՝ երբ խօսքը չի գնում ազատագրուած տարածքների մասին: Հասկանում եմ, որ դիւանագիտութեան եւ



ընթացող բանակցային գործընթացի մէջ դժուար է կտրուկ յայտարարութիւններ անել, սակայն ՄԴՀԿ-ի համար ամէն ինչ յստակ է: Մենք չենք պատրաստուում հող գիշեր: Ազատագրուած տարածքներն էլ են Արցախ եւ այդպիսին էլ կը մնան:

-Այս ամէնը չի՞ մշակուում, որ ՀՀ իշխանութիւնները «Ֆուտբոլային» դիւանագիտութիւնը հետ եմ պատեցնում:

-Կարծում եմ, որ գործընթացը հետ պատեցնելը կախուած է Հայաստանից: Այսպէս ասեմ՝ խաղի արժէքը միջազգային խաղացողների համար չափից աւելի բարձր է, որպէսզի այն հետ բերուի: Այլ խնդիր է, թէ (գոնէ իմ կարծիքով) անշրջելի այս գործընթացում որքան օգուտ եւ վնաս մենք կ'ունենանք: Այս պահին վնասների չափն իմ կարծիքով աւելի մեծ է:

-Ի՞նչ կ'անխառնուումներ ունէք հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հետագայ յարաբերությունների առումով: Որքանով էք հաւանական համարում Ադրբեջանի կողմից պատերազմի վերսկսումը:

-Սկսեմ հարցի վերջին մասից: Պատերազմի վերսկսումը մեր տարածաշրջանում իրատեսական չեմ համարում: Յամենայնդէպս, մեր հասարակութիւնը միշտ էլ պէտք է պատրաստ լինի դիմագրաւել ցանկացած վտանգի: Այո՛, Հայաստանում խնդիրները շատ են, սակայն Ադրբեջանի պէս փտած համակարգ ունեցող երկրի հետ համեմատութիւնն ուղղակի անթոյլատրելի է: Չեմ ուզում վերամբարձ արտայայտութիւններ անել, սակայն որպէս հնչակեան՝ ինձ համար պատերազմի վերսկսումը հնարաւորութիւն է այն աւարտել Բաքուում հայկական բանակի յաղթական շքերթով: Բայց նորից եմ ասում՝ այս պահին պատերազմի հնարաւորութիւնը ՄԴՀԿ-ի համար այդքան էլ տեսանելի չէ: Ինչ վերաբերում է հայ-թուրքական գործընթացին, ապա այն իմ կարծիքով շարունակուելու է: Այստեղ եւ մեզ համար բացասական աւելի եմ տեսնում, քան դրականը:

«Tor.am»

ԳԻՒՂԱՅԻ ՅԱՄԲՈՅԻ ՏՈՒՆԸ

ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Եւրատեսիլը Հայաստանում նորից կրքեր է բորբոքել, ու բաւական ուժեղ կրքեր: Երեւի ժամանակն է Եւրատեսիլն էլ հնչակել «մատնական դաւադրութիւն», որի նպատակը հայութեան միասնականութիւնը կոտորելն է: Այս անգամ էլ, ինչպէս նախորդ անգամներին, ամէն ինչի պատճառը Եւրատեսիլ երգի մրցոյթին Հայաստանի մասնակցի ընտրութիւնն էր: Ինչպէս յայտնի է, Փետրուարի 14-ին տեղի ունեցած ընտրութեամբ յաղթող հնչակուեց հայ հանդիսատեսին քիչ յայտնի Եւա Ռիվասը՝ մօր կողմից հայուհի, Ռուսաստանից, որը մի քանի ամիս առաջ է եկել Հայաստան, հանդիսատեսին ներկայացել է Սայաթ-Նովայի «Թամամ աշխարհ պտուտ եկայ» երգով, յետոյ յայտ ներկայացրել Եւրատեսիլին՝ մասնակցելու համար, եւ «Մի րանի կորիզ» երգով դարձել յաղթող:

Նրանից բացի, եւ գուցէ աւելի, Եւրատեսիլ մրցոյթի մասնակցի ընտրական մրցոյթի յաղթողի չաւանդը էին համարում իմ մի եւ Միհրան գոյգը, ինչպէս նաեւ Ռազմիկ Ամեանը: Հենց նրանք էլ, յատկապէս իմ մի եւ Միհրան գոյգը, եւ մասնաւորապէս գոյգի պրոդիւսեր, իմ մի մայր Նադեթրա Սարգսեանը, դժգոհում են ընտրութեան արդարութիւնից, SMS քուէարկութեան մեքենայութիւններից, կասկածում են, որ հայ հանդիսատեսը կարող էր իր «հարիւր տարուայ ծանօթ» երգիչներին աւելի քիչ ձայն տալ, քան նոր ծանօթ մի երգչուհու: Իսկ այդ դժգոհութեան հիմքերից առանցքայինն էլ համարում է թերեւս այն, որ Եւա Ռիվասին հովանաւորում է Ռուսաստանի հայաստանցի յայտնի գործարար Սամուէլ Կարապետեանը՝ Կալուզայի Սամոն, ով մօտ յարաբերութիւն ունի Հայաստանի երրորդ եւ երկրորդ նախագահների հետ:

Երբ երկրում տոտալ կեղծիքի մթնոլորտ է, կեղծում են բոլոր կարգի ու մակարդակի ընտրութիւնները, կեղծում են արժէքները, կեղծում է իրականութիւնը, Եւրատեսիլի մասնակցի ընտրութիւնը չի կարող մնալ դրանից անմասն: Յամենայն դէպս, հանրային գիտակցութիւնը չի կարող կեղծիքի համատարած մթնոլորտում ի դէմս Եւրատեսիլի արդարութեան կղզեակ տեսնել, առաւել եւս, որ այդ ոլորտում շօշափուում են մեծ փողեր, շօշափուում են իշխանութեան հետ մտերիմ մարդկանց անուններ: Իսկ հայաստանեան հասարակութեան շրջանում իշխանութիւնն ու կեղծիքը դարձել են հոմանիշներ, ու դա ոչ թէ հասարակութեան սուբիեկտիւ ընկալումների արտայայտումն է, որոնք կարող են առանձին դէպքերում իսկապէս լինել, այլ իշխանութեան երկար տարիների գործունէութեան օբիեկտիւ հետեւանքը:

Այս դէպքում արդէն ցանկացած խնդրի մասնագիտական կողմ յայտնուում է երկրորդ պլանում, եւ առաջ է գալիս քաղաքական, ու թերեւս ամենից առաջ քաղաքակրթական կողմը: Թերեւս որեւէ մի երկրում, որտեղ որպէս պետութիւն եւ հասարակութիւն հասել են արժէքային լուրջ ձեռքբերումների, Եւրատեսիլը վաղուց արդէն արժէք է, ու այդ պետութիւններում հասարակութեանը նոյնիսկ չի էլ հետաքրքրում, թէ ով է գնալու Եւրատեսիլ: Պատահական

չէ, որ վերջին մի քանի տարիներին Եւրատեսիլում յաղթող են դառնում եւ յաջողութիւնների են հասնում Արեւելեան Եւրոպայի եւ չեստորհրդային պետութիւնների ներկայացուցիչները, յատկապէս այն պետութիւնների, որտեղ վերնախաւերը իրենց հասարակութիւններին մատուցելու այլ արժէքներ չեն կարողացել եւ չեն կարողանում ստեղծել, ու մնացել են «ազգային ազատագրական» տեսարաններում:

Միւս կողմից, քանի որ Հայաստանը «տեսարանների» դարաշրջանում խորը «խցանուած» երկիր է, ու այդ երկրում շատ մեծ է Եւրատեսիլի պահանջարկը երգիչ-երգչուհիների մօտ, ապա զարմանալի չի լինի, եթէ ասեմք պարզուի, որ պահանջարկի այդ մեծութեան պատճառով մեծանում են նաեւ երգիչ-երգչուհիների առաջարկները Եւրատեսիլի Հայաստանի «փայտեր» հանդիսացող Հանրային հեռուստաընկերութեանը:

Ընդ որում, պէտք է բացառել, որ յաղթող մասնակիցը յաղթում է առանց որեւէ զարուղի ճանապարհի, միանգամայն արդար կերպով, բայց, կրկին նկատի ունենալով Հայաստանում գերակայ արժէքներն ու բարքերը, թերեւս շատ հաւանական է, կամ անհաւանական չէ, որ նոյնիսկ արդարութեան համար Հայաստանում պէտք է վճարել, գուցէ աւելի շատ վճարել, քան կեղծիքի համար: Ի վերջոյ, այն հասարակութիւններում, ուր Եւրատեսիլի բեմն է արժէք կամ խնդիր կամ նպատակ կամ հանրային ուշադրութեան առարկայ, այսինքն ուր տեսարաններն են թագաւորում, ամէն բան՝ արդարութիւն լինի, թէ կեղծիք, ապրանք է, որ իր գինն ունի:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ** ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի  
  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ  
  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
ՍԱՅԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
  
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Ֆեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail),  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

**Չեր Ծանուցումները Վստահեցէք**  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
massis2@earthlink.net

ՎԱՅԱՍԱՆ

ԴԱՏԱԽԱՋՈՒԹԻՒՆԸ ՄԵՐԺԵԼ Է ՄԱՐՏ 1-Ի ԶՈՐՈՒԱԾՆԵՐԻ ՅԱՐԱԶԱՏՆԵՐԻ ԴԻՍՈՒՄ-ԲՈՂՈՔԸ

Գլխավոր դատախազութիւնը մերժել է մարտիմէկեան իրադարձութիւններում զոհուածներին հարազատներին դիմում-բողոքը, որով նրանք վիճարկում էին Յատուկ քննչական ծառայութեան անգործութիւնը:

Համոզմունք չալսելով, որ սպանութեան հանգամանքների քննութիւնն իրականացում է ոչ արդիւնաւէտ, մեղաւորները յայտնաբերուած եւ պատժուած չեն, դիմողները Գլխավոր դատախազութիւնից պահանջել էին քննչական ծառայութեան անգործութիւնը ճանաչել ոչ իրաւաչափ, պարտաւորեցնել այդ ծառայութեանը՝ վերացնել անգործութիւնը, արդիւնաւէտ քննութիւն իրականացնել: Բողոք-դիմումներն միացել էին մարտի մեկի 10 գոհերից 9-ի իրաւաջողորները. միայն ոստիկանութեան սպայ Համլետ Թադեւոսեանի հարազատները չեն միացել՝ հիմնաւորելով, որ կորցրել են հաւատը ամէն ինչի նկատմամբ:

Դատախազութիւնը դիմումը մերժել է «անհիմն» լինելու պատճառաբանութեամբ: Գրաւոր մերժումը գոհերի հարազատների լիազօր ներկայացուցիչ Արտակ Զէյնալեանը ստացել է երկուշաբթի: Նա «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց, որ դատախազութիւնը որեւէ կերպ չի հիմնաւորել, թէ ինչու է գոհերի հարազատների բողոքը համարում անհիմն:

Այս դիմում-բողոքը Գլխավոր դատախազութեանն ուղարկուել էր երկրորդ անգամ: Առաջին անգամ Դեկտեմբերին դատախազութիւնը այն քննութեան չառաւ, հիմնաւոր-

ելով, որ Արտակ Զէյնալեանը չունի Յատուկ քննչական ծառայութեան կողմից հաստատուած լիազօրագիր՝ տուժողների իրաւաջողորների շահերը ներկայացնելու համար: Այնուհետեւ Զէյնալեանը ստացաւ անհրաժեշտ փաստաթղթերը, նորից ներկայացրեց դիմումը: Բայց գլխավոր դատախազութիւնը այս անգամ եզրակացրել է, որ գոհերի հարազատների վկայական փաստերը անհիմն են: «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Զէյնալեանը նշեց, որ ակնկալում է ստանալ մերժման մանրամասն հիմնաւորումները, որից չետոյ կ'որոշեն յետագայ անելիքները.

«Մեր վստահողների իրաւունքները պաշտպանելու ենք հնարաւոր բոլոր մատչելի միջոցներով», - յայտարարեց Զէյնալեանը:

Մարտիմէկեան իրադարձութիւններում զոհուած Տիգրան Խաչատրեանի մայրը՝ Ալլա Յովհաննիսեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նշեց, որ Գլխավոր դատախազութեան պատասխանը իրենց համար անակնկալ չէր: Այն հարցին, թէ եթէ սպասելիքներ չունեն, ինչո՞ւ են դիմում՝ Ալլա Յովհաննիսեանը պատասխանեց, որ իրենց վերջնական նպատակը Մարդու իրաւունքների եւրոպական դատարանն է, իսկ դրա համար նախ անհրաժեշտ է սպառել դատական ներքին ատենաները. - «Մենք բողոքելու ենք մինչեւ վերջ, մինչեւ որ բոլորը դատապարտուեն, ինչպէս նաեւ նրանք, ովքեր կոծկում են՝ տուժողների իրաւաջողորների վշտի հաշուին»:

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍԵԱՆԸ ՎՍԱՅ Է, ՈՐ ՀԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՅԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼՈՒՐՋ ԿՈՐՈՒՄՏՆԵՐ Է ՈՒՆԵՑԵԼ

Ազգային ժողովի նախկին նախագահ, նախկին հանրապետական Տիգրան Թորոսեանի կարծիքով, այսօր առաւել հաւանական է, որ Թուրքիան հայ-թուրքական յարաբերութիւնների նորմալացման արձանագրութիւնները չի վաւերացնի:

Այդ իրավիճակը, ըստ Թորոսեանի, ստեղծուեց Սահմանադրական դատարանի որոշումից չետոյ, երբ Թուրքիան, անմիջապէս օգտուելով դրանից, նշեց, թէ արձանագրութիւնների մէջ անուղղակի փոփոխութիւններ են արւում:

Լրագրողների հետ հանդիպմանը, խորհրդարանի նախկին խօսնակը համոզմունք չալսեց, թէ Թուրքիայի կողմից արձանագրութիւնների վաւերացումը բաւական բարդ է լինելու, քանի որ դրանից չետոյ Թուրքիայի իշխանութիւնները միաժամանակ ինդիքներ են ունենալու՝ թէ երկրի ներսում, թէ Ատրպէյճանում: Հետեւաբար, Թուրքիան, այլ ելք չունենալով, շարունակելու է կառչել Հայաստանի Սահմանադրական դատարանի յայտնի որոշումից:

Տիգրան Թորոսեանի համոզմամբ, որպէսզի Թուրքիան վաւերացնի այդ արձանագրութիւնները, ճնշման երկու գործիք գոյութիւն ունի. Հայոց Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ ԱՄՆ-ի Գոնկոյէսի բանաձեւի նախագիծը եւ ԱՄՆ-ի նախագահ



Ազգային ժողովի նախկին նախագահ Տիգրան Թորոսեան

Պարաբ Օպամայի ապրիլեան չորսեան ուղերձը: Ամէն դէպքում, ըստ պատգամաւորի, եթէ արձանագրութիւնների վաւերացումը տապալուի, Հայաստանը ոչինչ չի կորցնի: Աւելին, Տիգրան Թորոսեանը վստահ է, որ մինչ օրս այս գործընթացի հետեւանքով Հայաստանը լուրջ կորուստներ է ունեցել:

«Հայաստանը իսկապէս ունի կորուստներ: Ի վերջոյ, արձանագրութիւնների մէջ արձանագրուեց երկու հարցադրում, որոնք վերաբերում էին դեռեւս 93 թուականին Թուրքիայի դրած երեք նախապայմաններից երկուսին. առկայ գործող սահմանների ճանաչումը արձանագրութիւններում ունի իր ձեւակերպումը, եւ Յեղասպանութեան միջազգային ճանաչման հետ կապուած՝ զիտնականների ենթադրանքները ստեղծումը նոյն-

ՍԱՐԻԲԵԿ ՍՈՒՔԻԱՍԵԱՆՆ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՈՒԵԼ

Երկուշաբթի, Փետրուար 15-ին, բերման ենթարկուելուց աւելի քան 72 ժամ անց ոստիկանութեան հրեքունիի բաժնից ազատ արձակուեցին «Սիլ» կոնցեռնի համասեփականատէր Սարիբէկ Սուքիասեանը եւ «Ալքարատ» տոնավաճառի տնօրէն Արտաշ Ստեփանեանը: Նրանց նկատմամբ իբրեւ խափանման միջոց է ընտրուել բնակավայրից չհեռանալու մասին ստորագրութիւնը:

Ոստիկանութեան տարածած հաղորդագրութեան համաձայն, Փետրուարի 12-ին ոստիկանութեան է դիմել «Աուդիտ» ՍՊԸ տնօրէն Գոռ Դաւթեանը եւ յայտնել, որ «Սիլ գրուպի» գրասենեակում իրեն սպառնացել են ու պարտադրել ստորագրել «Բիւրեղ» ՓԲԸ-ի բաժնեմասերի հետ կապուած որոշ փաստաթղթեր:

Ընդ որում, ըստ հաղորդագրութեան, Գոռ Դաւթեանը ոստիկանութեանը այդ մասին հաղորդում էր տուել Փետրուարի 12-ին, ժամը 17:30-ին, այն դէպքում, երբ դրանից մէկուկէս ժամ առաջ ոստիկաններն արդէն մտել էին «Սիլ» կոնցեռնի գրասենեակ, բերման ենթարկել Սուքիասեանին, Ստեփանեանին, ըստ որոշ տեղեկութիւնների՝ անգամ Գոռ Դաւթեանին, որտեղ եւ նա տուել է այդ յայտարարութիւնը իր հասցէին հնչեցուած սպառնալիքի մասին: Ոստիկանութեան հասարակայնութեան հետ կապերի բաժնի պետ Սայադ Շիրինեանը պարզաբանել է, որ Գոռ Դաւթեանը նախ SMS հաղորդագրութեամբ է ոստիկանութեանը տեղեկացրել իր հասցէին ուղղուած սպառնալիքի մասին:

Սուքիասեանի պաշտպաններից Արա Զոհրաբեանը, «անհիմն» է համարում Գոռ Դաւթեանի մեղադրանքները ինչ-որ թուղթ ստորագրելու մասին, եւ նշում, որ գործը «սարքուել» է, եւ կապուած է նախկինում Սուքիասեաններին



Սարիբէկ Սուքիասեան

պատկանող «Բջնի» ընկերութեան գործի հետ, որի նկատմամբ 2007 թուականից կատարուած ստուգումների արդիւնքում շուրջ 5.2 միլիարդ դրամի տուգանք սահմանուեց: Այն բանից չետոյ, երբ ընկերութիւնը հրաժարուեց վճարել տուգանքները, ընկերութեան նկատմամբ սնանկութեան գործընթաց սկսուեց եւ «Բջնի» գործարանը աճուրդով վաճառուեց գործարար, Ազգային ժողովի պատգամաւոր Ռուբէն Հայրապետեանին:

«Վարչախումբը շարունակում է ապաւինել իր գոյատեւման միակ միջոցին՝ քաղաքական հալածանքներին, որոնց թիրախն են սովորական մարդկանցից սկսած՝ մինչեւ քաղաքական ու տնտեսական գործիչներ», - յայտարարել է ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսը:

«Սիլ» կոնցեռնի ներկայացուցիչների պնդմամբ՝ Սուքիասեան ընտանիքին պատկանող կամ նրա հետ համագործակցող կազմակերպութիւնների նկատմամբ «յատուկ» ուշադրութիւնը եւ, ըստ իրենց՝ ապօրինի ստուգումները սկսուել են 2007 թուականի տարուայ սեպտեմբերի 21-ից չետոյ, երբ Սուքիասեան եղբայրները իրենց գորակցութիւնը յայտնեցին նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՈՒՄԸ

Հայաստանի Դիւանագիտական դպրոցի բացման պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ Փետրուարի 15-ին՝ Դիւանագիտական դպրոցի նոր վերանորոգուած եւ վերաշինուած տարածքում: Դիւանագիտական դպրոցը հանդիսաւոր արարողութեամբ բացեցին Սերժ Սարգսեանը, ՀՀ արտաքին գործերի նախարար էդուարդ Նալբանդեանը, Հայաստանում Եւրամիութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Ռաուլ դէ Լուցենբերգերը եւ ԵԱՀԿ Երեւանեան գրասենեակի ղեկավար, դեսպան Սերգէյ Կապինսուր:

Դպրոցի դասընթացներին մասնակցելու համար եռափուլ մրցոյթի արդիւնքում ընտրուել են 150 դիմողներից 25-ը: Ուսանողները եզակի հնարաւորութիւն կ'ունենան դիւանագիտական ծառայութեան համար ցանկալի հմտութիւններով ու գիտելիքներով օժտուած կրտսեր դիւանագետներ դառնալու: Նրանք հնարաւորութիւն կ'ը ստանան արդիւնաւէտ կերպով ներկայացնել Հայաստանի շահերն արտերկրում:

պէս այն ենթատեքստումն է, որում Թուրքիայի հարցադրումն էր: Այս ամէնի դիմաց Հայաստանը չի ստա-



Դատախոսութիւններով հանդէս կը գան աշխարհի հեղինակաւոր համալսարանների պրոֆեսորներ, ինչպէս նաեւ առաջատար դիւանագետներ ու բարձրաստիճան քաղաքական գործիչներ:

Ակնկալուում է, որ Դիւանագիտական դպրոցը էական դեր կը կատարի որպէս Հայաստանի ժամանակակից դիւանագիտական ծառայութեան կարեւոր տարր:

Հիմնուելով եւրոպական լաւագոյն փորձի վրայ՝ ԵՄ-ն եւ ԵԱՀԿ Երեւանեան գրասենեակը լիարժէք փրանսակաւ եւ խորհրդատուական աջակցութիւն են տրամադրել Դիւանագիտական դպրոցի կայացման համար:

ցել որեւէ մի բան, եւ համոզուած եմ, որ չի ստանալու որեւէ բան», - յայտարարեց Տիգրան Թորոսեանը:

### ՀԱՅ ԽԱՂԱՂԱՊԱՅՆԵՐԸ ԺԱՄԱՆԵԼ ԵՆ ԱՖՂԱՆԻՍՏԱՆ



Հայաստանի զինուած ուժերի 40-հոգանոց խաղաղապահ ստորաբաժանումը

Աֆղանիստանում Միջազգային անվտանգութեան աջակցութեան ուժերի կազմում ՆԱՏՕ-ի առաքելութեանը մասնակցելու նպատակով կիրակի օրը տեղակայման վայր՝ Կունդուզ քաղաք է ժամանել Հայաստանի զինուած ուժերի 40-հոգանոց խաղաղապահ ստորաբաժանումը:

Հայկական զորախմբի հիմնական առաքելութիւնը Աֆղանիստանում լինելու է գերմանական ուժերի հետ համատեղ Կունդուզի օդանավակայանի անվտանգութեան ապահովումը:

Ստորաբաժանումը տեղակայման վայր է մեկնել Գերմանիայից,

որտեղ 2009 թուականի դեկտեմբերից մասնակցում էր նախատեղակայման վարժանքի:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութեան փոխանցմամբ՝ առաջիկայ շաբաթուայ ընթացքում հայկական զորախումբը գեղարուած կը լինի տեղակայմամբ, թրիկունքային հարցերի կարգաւորմամբ:

Փետրուարի 16-ին սպայակազմը կը մեկնի Կունդուզի օդանավակայան՝ տեղանքին եւ կատարուելիք առաջադրանքին ծանօթանալու նպատակով:

### ԷՐՏՈՂԱՆԸ ԵՒ ԴԱՎՈՒԹՕՂՈՒՆ ՔԼԻՆԹՈՆԻ ՅԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՄԻՆԱԿԻ ԽՄԲԻ ԴԵՐԻ ԱԿՏԻՎՑՄԱՆ ՀԱՐՑԸ

Միացեալ Նահանգների պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ թուրքիայի վարչապետ Ռեճեփ էրտողանի եւ արտգործնախարար Ահմէդ Դավութօղլուի՝ Կիրակի օրը կայացած հանդիպման ժամանակ քննարկուել է նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործում ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի դերի ակտիւացման հարցը: «Թրենա» գործակալութեան փոխանցմամբ՝ այդ մասին հաղորդել է CNN-Turk հեռուստաընկերութիւնը:

Վկայակոչելով իր դիւանագիտական աղբիւրները՝ CNN-Turk-

ը, մասնաւորապէս, հաղորդել է, թէ թուրքիայի արտգործնախարարը «մատնանշել է Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծման գործում ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի դերի ակտիւացման անհրաժեշտութիւնը»:

Էրտողանը, իր հերթին, անդրադարձել է հայ-թրքական հաշտեցման գործընթացին, պնդելով, թէ հայ-թրքական արձանագրութիւնների առնչութեամբ Հայաստանի Սահմանադրական դատարանի կայացրած որոշումը կարող է բացասաբար ազդել այդ գործընթացի վրայ:

### ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ԵԱՀԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՐԺԷ ԶԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԷՋ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՎԻՃԱԿԻՆ»

Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման եւ հայ-թրքական հաշտեցման հեռանկարները քննարկուած են Հայաստան այցելող ԵԱՀԿ-ի գործող նախագահ եւ Ղազախստանի արտաքին գործոց նախարար Կանատ Սաուտապաեւի ու Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի միջեւ Փետրուար 16-ին կայացած հանդիպման ժամանակ:

Տէր-Պետրոսեանի գլխաւորած Հայ Ազգային Գոնկրէսի գրասենեակի հաղորդագրութեան համաձայն՝ յատուկ անդրադարձ եղած է նաեւ Հայաստանի մէջ

ժողովրդավարութեան, մարդու իրաւունքներու եւ ազատութիւններու վիճակին: «Լեւոն Տէր-Պետրոսեանն այդ առնչութեամբ ԵԱՀԿ-ի գործող նախագահի ուղարկութիւնն է հրաւիրել այն հարցի վրայ, որ ԵԱՀԿ-ի եւ ԺՀՄԻԳ-ի գործունէութիւնը համարժէք չէ երկրում ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքների ոլորտներում տիրող վիճակին, եւ ակնկալիք է արտայայտել, որ այդ կազմակերպութիւններն այսուհետեւ նկատի կ'ունենան այս հանգամանքը», - ըստած է հաղորդագրութեան մէջ:

### ԼՂՀ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Ե ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ՆՈՐ ՍԿԶԲՈՒՆՔ

Փետրուարի 16-ին Երեւանում տեղի է ունեցել ԵԱՀԿ գործող նախագահ, Ղազախստանի արտգործնախարար Կանատ Սաուտապաեւի եւ ԼՂՀ նախագահ Բակո Սահակեանի հանդիպումը, որին մասնակցել է նաեւ ԼՂՀ արտգործնախարար Գէորգի Պետրոսեանը: Հանդիպումը տեղի է ունեցել «Կոլտրն Փելլա» հիւրանոցում: Հանդիպումից յետոյ Բակո Սահակեանը պատասխանել է լրագրողների հարցերին:

«Գիտէք, մի կողմից հանդիպումը կրում էր ճանաչողական բնույթ, որովհետեւ դա ԵԱՀԿ գործող նախագահի առաջին այցելութիւնն էր տարածաշրջան, միւս կողմից, իհարկէ, իւրաքանչիւր նման այցելութիւն, յատկապէս որ Ղազախստանը նոր է ընդունել նախագահութիւնը ԵԱՀԿ-ում, եւ բնական է համարում, որ կողմերը, յատկապէս Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը յոյսեր է կապում այդ նոր նախագահութիւնից, եւ մենք մեր հանդիպման ժամանակ այդ ուղղութեամբ նաեւ քննարկումներ ենք ունեցել, մէջբերելով մեր յոյսերը, կապուած Ղազախստանի այդ նախագահութեան ժամանակաշրջանում կատարուող աշխատանքներից», նշել է Բակո Սահակեանը:

Բակո Սահակեանը յայտնել է, որ Կանատ Սաուտապաեւին ներկայացրել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տեսակէտը: «Գործող նախագահը ուշադիր լսել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տեսակէտը բանակցային գործընթացի նկատմամբ, եւ այո, ես հնարաւորութիւն եմ ունեցել նաեւ քննարկելու Ադրբեջանի կողմից առաջ քաշուած եւ հիմնական քննարկուող թեման դարձած տարածքային ամբողջականութիւնը: Որպէս առաջարկութիւն, իմ կողմից ներկայացուել է նոր ուղղութիւն մտցնել բանակցային գործընթացում եւ տարածքային ամբողջականութիւնից հարցը տեղափոխել միջազգային իրաւական հարթութեան քննարկման: Եւ ես գտնում եմ, որ այդպիսի մօտեցումը հնարաւորութիւն կը տայ որոշակի արդիւնքներ արձանագրել թէ բանակցային գործընթացում,

եւ նման մօտեցումը հնարաւորութիւն կը տայ վերջնականապէս մօտենալ հարցի խաղաղ կարգաւորմանը», ասում է Բակո Սահակեանը:

Լրագրողները նաեւ հարցրել են, թէ արդեօք ԼՂՀ իշխանութիւնը ԵԱՀԿ գործող նախագահի հետ խօսել է Ադրբեջանի ռազմատենչ յայտարարութիւնների մասին: «Մենք նաեւ այդ հարցի շուրջ ենք տեսակէտներ յայտնել: Եւ ես Ադրբեջանի ներկայիս կեցուածքը, եւ ոչ միայն ներկայիս, այլ Ատրպէյճանի կեցուածքը ԼՂ հիմնախնդրի հետ կապուած, որակել եմ որպէս անբեկչութեան մի նոր ձեւ եւ մի նոր տեսակ: Եւ վաղուց արդէն միջազգային հանրութիւնը քաջատեղեակ լինելով Ադրբեջանի այդպիսի կեցուածքի հետ, չի իրականացնում այն միջոցառումները եւ այն քայլերը, որը, ինչու չէ ստիպի նաեւ իրենց մանրատի շրջանակներում, գերծ մնալ Ատրպէյճանին այդպիսի ռազմատենչ յայտարարութիւններից եւ ռազմատենչ քաղաքականութիւնից: Եւ յոյս ունենք, որ ԵԱՀԿ գործող նախագահը իր լիազօրութիւնների շրջանակներում համապատասխան քայլեր կ'իրականացնի, եւ Ադրբեջանը կը յայտնուի կառուցողական շրջանակներում», ասում է Բակո Սահակեանը:

Հարցին, թէ արդեօք Ղարաբաղի իշխանութիւնը ծանօթ է մարդիկեան առաջարկների լրացումներին, Բակո Սահակեանը պատասխանել է. «Քանի որ ԼՂՀ-ն չի մասնակցում բանակցային գործընթացին, բնական է պաշտօնական փաստաթուղթ համանախագահների կողմից չի ներկայացուում ԼՂՀ-ին: Բայց դա չի նշանակում, որ մենք տեղեակ չենք այս կամ այն փաստաթղթերի բովանդակութեանը, եւ բնական է, որ մենք տեղեակ ենք նաեւ այդ նորացուած փաստաթղթի կէտերին: Բայց այստեղ նոյնպէս մենք մշտապէս կրկնում ենք այն, որ առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան, թէ՛ այդ փաստաթղթերի մշակումը, թէ՛ նրանց հետագայ քննարկման եւ այդ փաստաթղթերի շրջանակներում այս կամ այն համաձայնութեան հասնելն անհնարին է առանց Արցախի»:

### ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ ՄՏԱՅՈՒԳՈՒԹ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՕՍՔԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿՈՎ

Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի փորձագէտ Մեսրոպ Յարութիւնեանը, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում մեկնաբանելով Լրագրողների Պաշտպանութեան կոմիտէի վերջին գեկոյցում Հայաստանի առնչութեամբ հնչեցուած քննադատութիւնը, նկատեց, որ առաւել մտահոգիչ է 2012 թուականի խորհրդարանական ընտրութիւններից առաջ Հայաստանում որդեգրուող պետական քաղաքականութիւնը:

Խորհրդարանում շրջանառութեան մէջ դրուած քաղաքացիական եւ քրէական օրէնսգրքերում փոփոխութիւնների փաթեթով իշխանութիւնները, ըստ փորձագէտի, արդէն պատրաստուած են խորհրդարանական ընտրութիւններին:

«Եւ պատրաստուած են այդ ընտրութիւնները կեղծել այնպէս, ինչպէս կեղծել են նախորդ ընտրութիւնները: Եթէ ընդունուեն

օրէնսդրական այն նախաձեռնութիւնները, որոնք հիմա շրջանառութեան մէջ են, տպագիր մամուլն էլ կամաց-կամաց ստիպուած է լինելու փակուել, կամ դառնալ այսօրուայ հեռուստատեսութեան համարակազմակերպութիւնները դառնալու են աւելի կառավարելի, եթէ ՀԿ-ների մասին օրէնքում փոփոխութիւնները ընդունուեն, եւ 2012 թուականին, ես հեզմանքով միշտ ասում եմ, մենք ունենալու ենք փայլուն ընտրութիւններ, որովհետեւ խախտումներ արձանագրողներ չեն լինելու»:

Խնդրոյ առարկայ օրէնսդրական փոփոխութիւնների փաթեթի նախագծի համաձայն, զրպարտութիւն եւ վիրաւորանք պարունակող հրապարակումների նկատմամբ սահմանուած են այնպիսի տուգանքներ, որոնք, Մեսրոպ Յարութիւնեանի բնորոշմամբ, կը հանգեցնեն ներքին գրաքննութեանն ու ինքնազրաքննութեանը:

**ՄԱՍԻՍ**  
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ

# ՌԱՖԻՔ ԶԱՐԻՐԻ ԵՆԱԿՆԱԿՈՒԹԵԱՆ 5-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ ՍԱԱՏ ԶԱՐԻՐԻ ՇԵՇՏԸ ԿԸ ԴՆԷ ԶԱՄԱԿԵՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ

Կիրակի 14 Փետրուարի առաւօտեան Կեդրոնական Պէջրութի մէջ տեղի ունեցաւ ժողովրդային հաւաք մը՝ ոգեկոչելու համար նախկին վարչապետ Ռաֆիք Զարիրի նահատակութեան յիշատակը: Մարտ 14-ի քաղաքական դաշինքի ընդհանուր քարտուղարութեան կազմակերպութեամբ տեղի ունեցած ոգեկոչման ձեռնարկին ներկայ գտնուեցան վարչապետ Սաստ Զարիրի, Մարտ 14-ի քաղաքական ուժերուն ղեկավարները, ինչպէս նաեւ քաղաքացիներու հոծ բազմութիւն մը: Միւս կողմէ, Ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթ՝ ընկերակցութեամբ իր գաւկիին՝ Թալմուր ձոմպլաթի, վարչապետ Զարիրի հետ ուղղուեցաւ նախկին վարչապետին դամբարանը, ուր տեղի ունեցաւ ծաղկեպսակի գետեղում եւ աղօթք, որմէ ետք ձոմպլաթ մեկնեցաւ Գլխամաստի իր բնակարանը: Նախկին վարչապետին սպանութեան ժամին գուգաղիպող պահուն կատարուեցաւ յատուկ աղօթք մը, որմէ ետք նահատակ Զարիրի որդին՝ վարչապետ Սաստ Զարիրի արտասանեց խօսք մը, որուն մէջ հաստատեց, թէ Լիբանան ներկայիս մուտք գործած է միջարաբական հաշտութեան ընթացքի մը մէջ: «Ոչ ոքի համար գաղտնիք է, թէ ես անձամբ կը գործակցիմ միջարաբական հաշտութեան այս քարտէսի կերտումին, իսկ Դամասկոս կատարած իմ այցելութիւնս Սէուտական Արաբիոյ Ապտալա պըն Ապտէլ Ազիզ թագաւորին կողմէ բացուած լայն պատուհանի մը կարեւոր մէկ բաժինն էր: Ես ամենայն անկեղծութեամբ եւ պատասխանատուութեամբ նախանձախնդիր պիտի մնամ այս պատուհանը բաց պահելու եւ պիտի անցնիմ նոր հանգրուանի մը ստեղծման՝ Լիբանան - Սուրիա երկկողմանի յարաբերութիւններու ծիրին մէջ, հիմնուելով այն տարազին վրայ, որ այդ յարաբերութիւնը ըլլայ ազատ, անկախ եւ գերիշխան երկու պետութիւններու միջեւ», ըսաւ ան: Զարիրի յայտնեց, որ Լիբանանի շահերը կը կայանան անոր կայունութեան մէջ՝ աւելցնելով, որ Լիբանանին շահերը կը կայանան նաեւ արաբական զօրակցութեան մէջ եւ անոնք կը կազմեն ռազմավարական շահեր, «հետեւաբար Լիբանանի համար շատ



վտանգաւոր է առանցքներու խաղերուն մաս կազմել, այդ պատճառով ալ միջարաբական հաշտութիւնը Լիբանանի համար առիթ մըն է, զոր պէտք է փախցնել, ինչ ալ ըլլան պատճառները», ըսաւ ան աւելցնելով, որ նախկին վարչապետ Ռաֆիք Զարիրի դամբարանին առջեւ արտասանուած որեւէ տեսակի ստախոսութիւն անոր եւ բոլոր նահատակներուն դէմ այլ ոճիր մը կը նկատուի: Վարչապետ Զարիրի շեշտեց, որ ինք կառչած պիտի մնայ միջազգային դատական ատենանին գործունէութեան, Թալմուրի համաձայնագիրին եւ իսլամ ու քրիստոնեայ համայնքներուն միջեւ կատարեալ հաւասարութեան: Խօսք արին նաեւ Փաղանգաւոր կուսակցութեան նախագահ Ամին ձեմայէլ, նախկին վարչապետ Ֆուատ Սինիորա եւ Լիբանանեան Ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր Ժաաթա: Յայտնեց, որ նախքան ոգեկոչման ձեռնարկին սկսիլը, սիւրբ երեսփոխան նախկին վարչապետի կնոջ՝ Նազիք Զարիրի սրտի խօսքը, իր ամուսնոյն նահատակութեան Ե. տարեկիցին առիթով: Նազիք Զարիրի իր խօսքին մէջ խոստացաւ Ռաֆիք Զարիրիին շարունակելու անոր որդեգրած ուղեգիծը՝ Սաստ Զարիրիի ղեկավարութեամբ եւ անոր ազգային կեցուածքներով, ինչպէս նաեւ Լիբանանի գերիշխանութիւնը պաշտպանելու լիբանանցիներուն հաստատ կամքով: Կիրակի առաւօտեան Հ.Մ.Մ Պէջրութի ակումբին առջեւ կը տիրէր արտակարգ երուզեմ: Արդարեւ Պէջրութի տարբեր շրջաններէն Հնչակեան կուսակցութեան մասնաճիւղերու ընկեր-ընկերուհիներ եւ համակիրներ առաւօտեան ժամը 9:30-ին Հ.Մ.Մ. ակումբի

առջեւէն խուռներամ ուղղուեցան դէպի Նահատակաց հրապարակ: Հանրահաւաքին մեկնող Հնչակեան շարքը կ'առաջնորդէին Կեդրոնական վարչութեան անդամներ երեսփոխան ընկեր Սեպուհ Գալիպաբեան, ընկեր տղթ. Եղիկ ձէրէճեան, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի վարիչ Մարմնի

ատենապետ ընկեր Տօքթ. Մարտիկ Ժամկոչեան եւ պետական երեսփոխան Մեթր Սերժ Թուրարգիսեան: Հաւաքին կը մասնակցէին նաեւ Հ.Մ.Մ. Սկաւառական Խումբի եւ «Տիւրունի» Երիտասարդական Ուսանողական Միութեան ընկեր-ընկերուհիներ:

## Ս.Դ.Յ.Կ. ՎԱՐԻՉ ՍԱՐՄՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՌԱՖԻՔ ԶԱՐԻՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ



Շաբաթ յետմիջօրէին, Ս.Դ.Հ.Կ. կուսակցութեան Լիբանանի Շրջանի վարիչ Մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը ատենապետ ընկ. տղթ. Մարտիկ Ժամկոչեանի գլխաւորութեամբ, կուսակցութեան կեդրոնական վարչութեան անդամներ երեսփոխան ընկեր Սեպուհ Գալիպաբեանի, Վազգէն Գալթաբեանի ընկերակցութեամբ այցելեց նախկին վարչապետ Ռաֆիք Զարիրի շիրիմ՝ անոր նահատակութեան 5-րդ տարեկիցին առիթով: Պատուիրակութեան մաս կը կազմէին նաեւ Հ.Մ.Մ-ի Պէջրութի եւ կուսակցական մասնաճիւղերու ընկեր-ընկերուհիներ, Հ.Մ.Մ-ի սկաւառներ եւ փողերախումբը: Պատուիրակութիւնը, յանուն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան, Հ.Մ.Մ-ի Սկաւառական Խորհուրդի եւ կուսակցական միաւորներու ծաղկեպսակներ գետեղեց նահատակ վարչապետ Ռաֆիք Զարիրի դամբարանին:

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԵՋ ՕՋԱԼԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ՕՐԸ ԿԱՏԱՂԻ ԲԱԽՈՒՄՆԵՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԵՆ

Քիւտբըր PKK-ի (Քրտական Բանուորական կուսակցութեան) առաջնորդ Ապտուլահ Օջալանի ձերբակալման 11-րդ տարին Թուրքիայի տարբեր քաղաքներու փողոցներուն մէջ տեղի ունեցած են կատաղի բախումներ ոստիկանութեան հետ եւ կրակոցներ: Փետրուար 15-ին՝ իմրայի կղզիին մէջ ցմահ դատապարտուած Ապտուլահ Օջալանի ձերբակալման օրը Թուրքիոյ տարբեր քաղաքներուն մէջ տեղի ունեցած բողոքի ցուցերու ընթացքին ոստիկանութեան եւ քիւրտ ցուցարարներու միջեւ լուրջ բախումներ տեղի ունեցած են: Տասնեակ վիրաւորներ, ներառեալ ոստիկաններ տեղափոխուած են հիւանդանոցներ: Ստամպուլի բողոքի գործողութիւններուն մասնակցած են քրտական «Խաղաղութիւն եւ ժողովրդավարութիւն» կուսակցութեան պատգամաւոր Սաբահաթ Թունջելը: Ստամբուլի մէջ ձերբակալուած են բազմաթիւ բողոքաւորներ եւ հիւանդանոց տեղափոխուած են որոշ վիրաւորներ: Իրադրութիւնը լարուած է նաեւ Տիարպեքիւրի մէջ: Այստեղ կրկին բողոքի գործողութիւնները ղեկավարած է քրտական «Խաղաղութիւն եւ ժողովրդավարութիւն» կուսակցութեան պատգամաւորներէն մէկը: Ոստիկանութիւնը օգտագործած է արցունքաբեր կազ եւ ջրցան մեքենաներ: Բազմաթիւ ցուցարարներ ձերբակալուած են: Շրտաքի եւ Ջիզրէյի մէջ քիւրտ ցուցարարները պատնէշներ կառուցած են եւ անիւներ այրած են: Այստեղ հնչած են կրակոցներ:

## ԶԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է. «ԻՐԱՆԻ ՄԵՋ ԿԱՐՈՂ Է ՅԱՌԱՋԱՆԱԼ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

«Իրանի մէջ կարող է յառաջանալ ռազմական միապետութիւն», - ելոյթ ունենալով Քաթարի մէջ՝ Արաբական համալսարանի ուսանողներու առջեւ, կարծիք է յայտնած է ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլըրի Բլինթընը: Անոր գնահատումով՝ Իրանի Յեղափոխութեան Պահապաններու խորհուրդը այնպիսի իշխանութեամբ օժտուած է, որ անոր հնարաւորութիւն կու տայ դառնալու երկրի փաստացի կառավարութիւնը: Իրանի աթոմային ծրագրի շուրջ քննարկումները Քլինթընի՝ Պարսից ծոցի երկրներ կատարած այցի առանցքային թեման են:

## ԱՄՆ-Ը ԵՒ ՓԱՔԻՍՏԱՆԸ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ ԵՆ ԹԱԼԻՊԱՆԻ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԶՐԱՄՏԱՐԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Միացիալ Նահանգներու եւ Փաքիստանի պաշտօնեաներու փոխանցմամբ՝ երկու երկիրներու գաղտնի ծառայութիւնները համատեղ կատարած գործողութեան ընթացքին ձերբակալած են Թալիպանի բարձրաստիճան գինուորական հրամանատար մուլա Աբուլ-Հանի Պարատարին: Պարատարը կը համարուի Թալիպանի հիմնադիր մուլա Մոհամադ Օմարի մերձակոր գինակիցը:

### ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԴՅԱ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՍԵԴՐԱԿ ԱՃԵՍԵԱՆԻ ՀԵՏ

-Պարոն Աճեմեան, ինչպէս էք գնահատում հայ-թուրքական ներկայ գործընթացը, եւ ըստ Ձեզ, ո՞ր եմք մենք գնում:

-Շնորհակալութիւն, պէտք է ասեմ, որ տեղի է ունենում այն, ինչի մասին ամբողջ համապիւլու Հնչակեան կուսակցութիւնը բարձրաձայնում եւ զգուշացնում էր վերջին մէկ տարուայ ընթացքում: Մենք յայտարարում էինք, որ սա շատ հապճեպ գործընթաց է, որ այս գործընթացում ուժերի յարաբերակցութիւնն ամենեւին էլ մեր օգտին չէ: Այս մեկնարկային պայմաններում մտնել նման գործընթացի մէջ հսկայական ռիսկ է պարունակում, ռիսկ՝ նախ եւ առաջ մեր ազգի եւ պետականութեան համար:

-Ո՞ր պայմաններում է ՍԴՅԱ-ն համաձայն Սահմանի բացմանը:

-Թող սխալ տպաւորութիւն չտեղծուի, որ հնչակեանները չեն ցանկանում Հայաստանը տեսնել բաց եւ ապաշրջափակուած պայմաններում: Այստեղ խնդիրն այն զինն է, որ մենք պէտք է վճարենք, որպէսզի սահմանի բացումը եւ հայ-թուրքական հաշտեցումը կայանայ: Թուրքիան ինքն է, որ փակել է սահմանը, ինքն է, որ տասնեակ տարիներ զրկանքներ եւ տառապանքներ է պատճառել հայ ժողովրդին, հայրենազրկել եւ կոտորել մեր ազգին: Այսօր պաշտօնական Անկարայի շուրթերից արդէն հնչել են այնպիսի սաղիչ եւ հակահայ յայտարարութիւններ, որ Երեւանը բոլոր բարոյական եւ իրաւական հիմքերն ունի դադարեցնել գործընթացը: Վստահ եմ, որ վաղ թէ ուշ այդպէս էլ լինելու է:

-Պարոն Աճեմեան, այսօր Ադրբեջանն ամէն օր խօսում է պատերազմի մասին: Ի՞նչ էք կարծում, կա՞յ արդեօք նման հնարաւորութիւն, թէ ոչ, եւ որն է ըստ Ձեզ Արցախի խնդրի լուծման հնարաւորութիւնը:

-Արցախի խնդիրը մեզ համար վաղուց լուծուած է: Լուծուած է այն օրից, երբ արցախահայ մեր քոյրերն ու եղբայրները միջազգային բոլոր ընդունուած նորմերի համաձայն յայտարարեցին իրենց անկախութեան մասին եւ պայքարե-



ցին յանուն դրա՝ տեսնելով անասելի զրկանքներ, արիւն, մահ: Արցախն իր արիւնով պարտադրեց ոխերիմ թշնամուն կնքել խաղաղութեան պայմանագիր: Այսօր Արցախն իբրեւ պետութիւն մի քանի տասնեակ անգամ ժողովրդավար է, քան Ադրբեջանը, կայացած իր պետական ինստիտուտների մեծ մասով: Թէ Արցախը, թէ յարակից ազատագրուած տարածքները հայինն են անյիշելի ժամանակներից եւ այդպէս էլ մնալու է: Ինչ վերաբերում է պատերազմին, հաւաստիացնում եմ Ձեզ, որ ազերին, եթէ մէկ րոպէ անգամ վստահ լինէր, որ կարող է գէնքի ուժով հարց լուծել, ապա վաղուց դա արել էր:

-Պարոն Աճեմեան, վերադառնալով Հայաստան: Ի՞նչ կասեք Յնչակեան կուսակցութեան շուրջ տիրող զարգացումներին:

-Մեզ մօտ ոչ մի խնդիր չկայ, բոլոր խնդիրները վաղուց լուծուած եւ անցեալում են: Անցնենք առաջ:

-Դնարաւոր համարում էք Բալանդական միւս կուսակցութիւնների, այդ թւում եւ Դաշնակցութեան հետ համագործակցութիւնը:

-Չնայած բազմաթիւ տարակարծութիւններին ներքին որոշ քաղաքական խնդիրների շուրջ, համազգային խնդիրների հարցում մենք պարբերաբար համագործակցում ենք: Վստ չէր լինի, եթէ միւս քաղաքական ուժերն էլ նոյնը անէին: Դրանից միայն հայ ժողովուրդը կ'օգտուէր:

www.haynews.am

### ՀԱՅ ԱՍԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏ. «ՉԵՍ ԿԱՐԾՈՒՄ, ՈՐ ՆԱԽԱԳԱՅ ՕՐԱՄԱՆ ԱՐՏԱՍԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՌԸ»

Haynews.am-ը բացառիկ հարցազրոյց է ունեցել ՍԴՅ Հայ Ամերիկեան խորհրդի ատենապետ Վազգէն Խոտանեանի հետ: -Պրն. Խոտանեան, ԱՄՆ հայկական կազմակերպութիւնների եւ պետքարտուղար Քլինթոնի հանդիպման յետաձգումը տարաբնոյթ մեկնաբանութիւնների առիթ տուեց: Վերջապէս ո՞րն էր պատճառը, որ նախատեսուած հանդիպումը տեղի չունեցաւ:

-Այս պահին յստակ պատասխանելը մի քիչ դժուար է: Հանդիպման չկայանալու մի քանի հնարաւոր տարբերակ կա, որոնց մէջ է նաեւ համայնքի ներսում ծայր առած դժգոհութիւնն առ այն, որ հանդիպումը ներկայացուցչական չէր, կամ, աւելի ճիշդ նմանուելու էր show-ի, որովհետեւ հանդիպման մասնակիցները հեռու էին ամբողջ հայկական համայնքը ներկայացնելու փաստից: Հանդիպման նմանատիպ «կազմակերպման» մէջ մեծ դերակատարութիւն ունէր Ամերիկայի Հայկական Համագումարը, որն էլ առաջարկել էր մասնակիցների ցանկը: Քլինթոնի հետ հանդիպման մասնակիցների գերակշիռ մասը կողմ էին հայ-թուրքական արձանագրութիւնների վաւերացմանը, ինչն էլ, թերեւ, հայկական համայնքում դժգոհութիւն առաջացրեց: Սա հնարաւոր տարբերակներից մէկն է: Որպէս երկրորդ տարբերակ կարող եմ ասել, որ միգրացիոն պետքարտուղարութիւնն ինքը հրաժարուեց այս հանդիպումից:

-Պրն Խոտանեան, ե՞րբ տեղի կ'ունենայ այս հանդիպումը:

-Դժուարանում եմ պատաս-

խանել, թէ տեղի կ'ունենայ ընդհանրապէս, թէ ոչ: Կարծում եմ, որ առաջիկայում կը յստակեցուի հանդիպման հնարաւորութիւնը:

-Մարտի 4-ին Հայոց Յեղասպանութեան խնդիրը քննարկուելու է ԱՄՆ Կոնգրէսի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովում: Ըստ Ձեզ, կա՞ արդեօք հնարաւորութիւն, որ Բարաք Օբաման Ապրիլի 24-ին արտասանի Յեղասպանութիւնը բառը, եթէ, այնուամենայնիւ, Թուրքիան մինչ այդ չվաւերացնի արձանագրութիւնները:

-Կարծում եմ, որ Կոնգրէսի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովում Հայոց Յեղասպանութեան խնդիրը քննարկուելու է Թուրքիայի վրայ արձանագրութիւններն օր առաջ վաւերացնելու նպատակով ճնշում գործադրելու համար: Հնարաւոր է, որ արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովն այնուամենայնիւ դրական եզրակացութիւն տա նախագծին, սակայն երբ այն կը մտնի Կոնգրէսի լիազուածար նիստ՝ դժուարանում եմ պատասխանել: Այստեղ մեծ դերակատարութիւն ունի նաեւ խօսնակ Նենսի Փելոսին, որից է կախուած նաեւ Յեղասպանութեան բանաձեւի մուտքը Կոնգրէս: Ինչ վերաբերում է նորան, որ նախագահ Օբաման Ապրիլի 24-ի էլոյթում արտասանի Յեղասպանութիւնը բառը, ապա այստեղ ես մի քիչ թերահաւատ եմ: Կարծում եմ, քանի դեռ հայ-թուրքական արձանագրութիւնները «ողջ» են, Օբամայի կողմից այդ քայլը սպասելի չէ:

www.haynews.am

### ԲԱՆԹՈՒՐՔԻԶՍԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄՈՏԱՅՈՎ. ԹՈՒՐՔԻԱՆ ԿՈՒԶԷ ԵՒՐԱՍԻԱՅՈՒՄ ՍՏԵՂԾԵԼ ԵՒՐԱՍԻՈՒԹԵԱՆ ՆՄԱՆ ԿԱՌՈՅՑ ՍԸ, ԲՆԱԿԱՆԱԲԱՐ ԻՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ

Թուրքիան Հայաստանի հետ հարցերը չլուծած անցած է մարդկութեան ճակատագրին վերաբերող հարցերու լուծմանը:

Թուրքիայի արտգործնախարարը ընդարձակ ելոյթ ունեցած է դիւանագիտական առաքելութեան ներկայացուցչի չնքնու 7-րդ համաժողովին:

Թուրքական Ihlasonda kika-ի փոխանցումով ԱՏՄԵՍ Դաւութօղլուն անդրադարձած է տարածաշրջանային համաշխարհային

զարգացումներուն՝ առաջարկելով Եւրասիայի մէջ ստեղծել Եւրամիութեան նման կառույց մը նշելով.

Եվրասիայի տարածաշրջանը աշխարհի տնտեսութեան շարժիչ ուժը պիտի դառնայ: Այս աշխարհագրական տարածքը իր պոտենցիալով դուրս կու գայ հակամարտութիւնների: Այսօր այդ քաղաքական կամքը կայ: Տեսէք վերջին շրջանին Ռուսաստանի հետ

Շար.ք էջ 19

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O.1060 N.ALLEN AVE.PASADENA, CA 91104  
Norserount@sbcglobal.net

**SERVING SINCE 1975**  
**BEDROS S. MARONIAN**  
(818) 500-9585  
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com  
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205  
ԵՐՔԵՔ ՈՒՇ ԶԷ ԿԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



# ՂԱՐԱԲԱՂԸ ԲԱՆԱԽՈՐ ՊԱՏՃԱՊԻ ԹԷ ԱՌԻԹ ԿՐՈՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿՐԱԿԸ

## ՀԱՄԱՐԿ ԿՐՈՑԻՈՒՆ

Փոքրիշատե ընթերցող հասարակության ծանօթ է Միջին Արևելքի ներս տիրող վատօրային կացությունը, որ ամեն օր կը խլէ մարդկային անմեղ գոհեր, որոնց մէջ անշուշտ առաջին հերթին անպակաս են երեխաներ, կիներ եւ ծերեր: Այսօր Պաղեստին, Իրաք, Աֆղանիստան, Փաքիստան եւ Եմեն, վրան բարդած Ամերիկեան ցամաքամասի վրայ կիրարկուող անմարդկայնություններ, կիզակէտերն են աշխարհի խաղաղասէր մարդկության, ուր մահուան գերանդին կը գործէ անխնայօրէն, դժբախտացնելով այդ երկիրներուն բնակիչները եւ քայքայելով տնտեսություն, ճարտարարուեստ եւ քաղաքներ, միանգամայն աղքատացնելով տուեալ երկիրները եւ բնականաբար՝ ժողովուրդները:

Այս բոլորի կողքին, կար ու կայ անշուշտ Ղարաբաղեան տագնապը, որ այսօր քսան տարիներէ ի վեր գրեթէ ունի լուծ վիճակ, երբ հերոսական ու քաջարի հայ բանակը ազատագրեց Լեռնային Ղարաբաղը եւ շրջակայ տարածքները՝ ատրպէյձանական բռնագրաւիչ ուժերու ձեռքէն, իր վրայ պարտադրուած անհաւասար մարտերէ ու պատերազմէ վերջ, ուր Արցախի ժողովուրդը երկուսուսուսեալէ մը ի վեր կը տնօրինէ իր ճակատագիրը եւ կը շարունակէ իր խաղաղ կեանքը, ի հեճուկս բարձրացող վայնասուններուն, եւ սկանջ ցաւցնող պոռչուածներուն:

Սակայն, Կովկասէ եւ կովկասամերձ շրջաններէ ներս հեղինակություն ու ազդեցություն ունենալ փորձող որոշ ուժեր կամ պետություններ, այսօր լո՛ւր մրցակցութեան մը սկսած են վերոյիջեալ տարածքներու կապակցութեամբ, աւելի ու աւելի ամրապնդելու համար դիրք ու կեցուածք, երբեմն երբեմն քաջալերուած փշող քամիներէն, որոնք ի յառաջագունէ կը հանդիսանան աւերիչ, որոնց համար միակ նպատակը կեանքի, իրենց հետապնդած ու ձեռք ձգելիք գիւթական շահն է:

Այս բոլորին մէջ ուշագրաւ է անշուշտ առաջին հերթին Թուրքիոյ ունեցած ախորժակը, որ «բարի դրացնութիւն» կարգախօսի անուանակարգ միջնէն օրս յաջողեցաւ սիրալիր յարաբերություններ մշակել իր բոլոր հարեւաններուն հետ, հակառակ անոնց հետ ունեցած իր խոր

տարակարծութիւններուն... օգտագործելով նաեւ արաբական հանրապետություններու պարագային կրօնական հանգամանք ու կապակցություն, երազելով դառնալ Օսմանեան Կայսրութեան նման անձայրածիր ու աշխարհակալ գերիզօր, առանց նկատի առնելու իր ներքին խոհանոցին այժմու խառնակ վիճակը, միշտ ալ վայելելով հովանաւորութիւնը՝ մերթ Միացեալ Նահանգներուն, մերթ ալ Եւրոպական Միութեան, կամ՝ այլ շահախնդիր պետություններուն, որոնց հետ ունի տնտեսական կամ ռազմական դաշինք:

Երկրորդ գծի վրայ կու գայ Պարսկաստանը, որ ուժային իմաստով այսօր տիրանալով բացառիկ զինուորական կարողութեան եւ փորձառութեան Միջին Արևելքի մէջ, կը ցանկայ ամբողջացնել իր միջուկային ծրագիրները, հասնելու համար իր փափաքած երազին, Փաքիստանէն ետք դառնալու համար երկրորդ միջուկային ուժ ունեցող հզօր պետութիւն, հակառակ Միացեալ Նահանգներու, Եւրոպայի, Հրեաստանի եւ կարգ մը ծոցի արաբական երկիրներու այս կապակցութեամբ ունեցած վերապահութեանց եւ ընդդիմութեանց:

Երրորդ գծի վրայ կու գայ անշուշտ Ռուսաստանը, որ Սովետական Միութեան փլուզումէն ետք, դարձեալ կ'ուզէ իր նախկին հեղինակությունն ու տիրությունը հաստատել շրջանէն ներս, միշտ ընդլայնուած եւ ապահով պահելու համար իր հարաւային սահմանները, ուր ան ունի երկու կարեւոր դաշնակից այսօր՝ Պարսկաստանն ու վաղեմի բարեկամ Հայաստանը:

Երբ կը բննարկենք Կովկասէ ներս սրող մագլցումը, անկասկած որ պէտք չէ ուշադրութեան հեռացնել Հայաստանի արեւելեան դրացին՝ Ատրպէյձանը, որ հիմնուելով իր ունեցած երեք կարեւոր առաւելութիւններուն, յաճախ կ'ունենայ սպառնալիք՝ Հայաստանի եւ Արցախի դէմ, զինու ուժով լուծելու «բռնագրաւուած հողեր» ու հարցը, որուն յաջողութեան հասնելու համար բնականօրէն կ'ապաւիճի՝ նախ իր քարիդային քաղաքականութեան, երկրորդ՝ իր աւագ եղբոր Թուրքիոյ՝ լաւագոյնս գիտակցելով երկուստեք ունեցած լեզուական, կրօնական ու արեւնական կապակցությունները,

ապա եւ կարեւորը՝ Միացեալ Նահանգներու եւ «ՆԱԹՕ»ի հետ ունեցած իր սերտ գործակցությունն ու առնչությունը:

Վստահաբար, կարճ ժամանակ մը առաջ, Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ տեղի ունեցած ծանօթ բախումէն (պատերազմ) ետք, Արեւմտեան պետություններ նշմարեցին Ռուսաստանի յստակ միջամտությունը ի նպաստ Օսթիոյ... եւ իրենց դրսեւորած անկարողությունը՝ ուղղակիօրէն միջամուխ դառնալու՝ ի նպաստ Վրաստանի, հաւանաբար վիճակ մը, որ պահ մը մտածել տուաւ թէ՛ Արեւմտեան պետություններուն եւ թէ՛ Թուրքիոյ... երկար ժամանակ, որոնք դաշնակիցներն են Վրաստանի...: Անոնք, վերջապէս հասկցան, թէ՛ Կովկասէ ներս կայ նաեւ հիւսիսի մնայուն «կազմ ու պատրաստ» մարդը, որ «կրակի հետ խաղալ» չի սիրեր...:

Սակայն այսօր, կանխամտածող ու որպէ՛ս թէ դարբնուող նոր պատերազմ մը Կովկասի մէջ՝ Հայաստանի եւ Ատրպէյձանի միջեւ, թերեւս հանդիսանայ ոսկի առիթ՝ թեթեւցնելու այլ ճակատներէ ներս տեղի ունեցող մագլցումներուն քաղաքական վերիվայրումներն ու հաշիւները, եւ ստեղծել մեկնարկ՝ գուցէ Արեւմտեան պետութիւններու համար, ներառած Հրեաստանն ալ, (որ մեծագոյն դժգոհողն է Պարսկաստանի զինուորական այժմու կացութեան) Իսլամական այս երկրին նկատմամբ սրուած ախորժակները իրագործելու, օգտուելով անշուշտ պատերազմի մը ընձեռած բոլոր հնարաւորություններէն:

Թերեւս անոնք, պատերազմասէր ասպետներ, առաջին հերթին գուցէ կը մտածեն օգտագործել իրենց բարեկամ Ատրպէյձանի հողային տարածքը, աքցանելու համար հիւլեական զէնքի տիրանալ ցանկացող Պարսկաստանը... հիւսիսէն՝ Ատրպէյձանով, արեւելքէն՝ Աֆղանիստանով ու Փաքիստանով, հարաւէն՝ Արաբական Ծոցի երկիրներով ու արիւն լացող Իրաքով՝ իսկ արեւմուտքէն՝ Թուրքիայով... անշուշտ, լրի՛ւ համոզուելէ ետք միայն, թէ արդեօ՞ք Ռուսաստան պիտի որդեգրէ իսկապէս «դրական չէզոքություն» այսպիսի կացութեան մը դիմաց...:

Ինչ կը վերաբերի Թուրքիոյ ունենալիք ազդեցիկ դերին, շնորհիւ իր ունեցած զինուորական առա-

ւելութեան, վերջինս իր որդեգրած որձեւէզ դիւանագիտութեամբ ու ճարպիկ հաշիւներով աւանդականօրէն ճիշդ է որ կը դասուի Միացեալ Նահանգներու սերտ դաշնակից, բայց եւ այնպէս վերջին շրջանին իր խաղաղ քաղաքական դերակատարութեամբ ու արձանագրած մագլցումներով դարձած է նոյն չափ կասկածելի... իր իսկ հովանաւորներուն համար, որ կրնայ յանկարծ դիմափոխուիլ՝ ըստ խաղի օրէնքներուն եւ օդի ջերմաստիճանին...:

Այնքան է այն, որ քաղաքական շուկայի մէջ փորձառու թուրքը, չհաւատալով իր ձեռք ձգած քաղաքական փայլուն յաջողություններուն, (նամանաւանդ արաբական աշխարհի պարագային), վերջերս, համարձակեցաւ բերնի ծայրով ամբաստանություններ ու մեղադրանքներ տեղացնել իր վաղեմի գործակից ու զինուորական նեցուկ ու դաշնակից Հրեաստանի գլխուն, (քաղաքական ճկուն խա՞ղ, թէ յստակ դիրքորոշում՝ Աստուած գիտէ) մինչեւ իսկ զայն ցեղասպան կոչելու աստիճան... Գարմացնելով՝ նոյնիմանք՝ հրեայ ղեկավարները, որոնք իրապէ՛ս ծանօթ են թէ՛ իսկական ցեղասպաններու անցագիրներուն, բայց կը ձեւանան խոյ ու կոյր՝ ամբարտաւանօրէն...:

Անշուշտ, թուրքիոյ այս անըսպասուած քայլը պատճառ հանդիսացաւ որպէսզի արաբ կարգ մը ղեկավար դէմքեր մեծ ուրախութեամբ ու ոգեւորութեամբ հերոսի պատմուճան հագցնեն անոր, իր խիզախ կեցուածքին համար, տարօրինակօրէն շատ շուտ մոռնալով չորսհարիւր տարիներու պատմութիւն, տանջանք ու տառապանք, սպանդ ու կախաղան... Գորս ցոյց տուաւ իրեն օսմանցին, լացնելով բազմաթիւ արաբ մայրեր:

Ամեն պարագայի, քաղաքական դիրքորոշումներու համար հայատրպէյձանական նոր պատերազմական արկածախնդրական քայլ մը, թերեւս սկզբնական պատկերացում որպէս թոյի գուցէ նպաստաւոր՝ պատերազմը ջատագովող նախաձեռնողներու եւ հետապնդողներու համար, բայց գործնականացման կամ իրականացման պարագային, Կովկասէ ներս Ղարաբաղով շեփորելիք ու սկիզբ առնելիք պատերազմ մը, շուտով իր երախից մէջ կրնայ առնել ամբողջ Միջին

Շարք էջ 19

*The Quality Choice for Your Child's High School Education*

**ANNUAL OPEN HOUSE**  
**SATURDAY, FEBRUARY 20, 2010**  
**10:00AM - 1:00PM**

**AGBU VATCHE & TAMAR MANOUKIAN HIGH SCHOOL**  
*Formerly known as AGBU High School - Pasadena*

Our annual open house for prospective parents and students is the perfect opportunity for you to learn about the quality programs AGBU Vatche & Tamar Manoukian High School has to offer.

To RSVP, or for more information, please contact the School Office at (626) 794-0363  
 2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104 (Corner of Altadena and Mountain Street)

# ՊԱՐԹՈՒՅԻՆ

## ԱՐԹՈՒՐ ԱՎԱՆԵՍՈՎ

«ՆԱ՛ ՆՈՐ ԿՐՄԻՆՏՐ Է ԱԲԵԼԱՅՆՈՒՄ ՍԵՐ ԱՐՈՒԵՍՏԻ ԱՍՐՈՅԻՆ»

### Գ. ՄՈՒՆՅԱՆ

Լարք Երաժշտական Ընկերակցությունը ներկայ տարեշրջանին առաւել աշխույժ գործունէութիւն մը ծաւալած ըլլալով գեղարուեստասէր հասարակութիւնը անմասն չի մնար եւ կը վայելէ ու կը քաջալերէ այդ միջոցառումները:

Արդարեւ, իր տեսակին մէջ ինքնատիպ եւ շահեկան ձեռնարկի մը ներկայ գտնուեցանք Կիրակի Փետրուարի 7ին, 2010, Լարք Երաժշտանոցի Դրբանձեան սրահին մէջ: Տեղի ունեցածը համերգ-դասախօսութիւն մըն էր «Ժամանակակից Հայ Երաժշտութիւնը եւ Արդի Հայ Կոմպոզիտորները» նիւթին շուրջ:

Ոմանք ուզեցին խորհրդապաշտութեան անունը տալ անոր եւ Տէրեանը մկրտեցին այդ պիտակումով: Ճիշդ է՝ եւ ճիշդ չէ այս կաղապարումը: Ճիշդ է՝ եթէ նկատի առնենք խորհրդապաշտութեան մեծագոյն վարպետին, Մալարմէին այս սահմանումը, թէ «առարկաներուն հայեցումը, անոնց առթած երազանքին թուշող պատկերը երգ է, բանաստեղծութիւն: Քիչ առ քիչ յուշել, ուրուագծել առարկայ մը, ցոյց տալու համար հոգեվիճակ մը կամ հակառակը, ընտրել առարկայ մը եւ անկից, աստիճանական յայտնութիւններով բղխեցնել հոգեվիճակ մը»: Այս տեսանկիւնէն դիտուած, իր ձեւով եւ արուեստով, խորհրդապաշտ մըն էր Տէրեան: Բայց անոր կը պակասէր խորհրդապաշտութեան հական ոգին որ կը դրսեւորուէր ընդհանրապէս անհատապաշտ կեցուածքով եւ անկումային տրամադրութիւններով: Տէրեանի թախճերգութիւնները բնաւ չի բաղտատուել Ֆրանսական եւ ռուսական խորհրդապաշտներու ոչնչապաշտութեան եւ յոռետեսութեան հետ: Իր թախիժն ու կարօտը, սէրն ու տագնապումը, երազանքն ու նոյնիսկ վհատութեան պահերը հիմնովին տարբերեցան Վեռլէնի մը, Ռեմպոյի մը, եւ կամ նոյնիսկ Ալեքսանդր Պլոքի մը եւ Եսենինի մը նոյնանուն ապրումներէն, որոնք գլխաղիբով գրուած, վերացական թախիժն էին, կարօտը, Սէրը եւ Տագնապը՝ ինքնանպատակ եւ սալոնային: Տէրեանինը եղաւ հեռաւոր ու ցուրտ քաղաքներու մշուշին եւ առանձնութեան մէջ մորմոքող հայ մարդուն թախիժն ու տագնապը, կարօտն ու տուալտանքը: Սա միայն ազգային երանգաւորում կամ տեղական գոյնի տարբերութիւն չէր, այլ ապրումներուն նոր, իւրայատուկ որակ: Ճիշդ է թէ Տէրեանի մօտ ալ, նոյնիսկ ակնի սրուած ձեւով առկայ է խորհրդապաշտներուն այն մասնայատուկ ձգտումը՝ «տխեղծ առօրեայէն, քաղքենիական տափակ եւ հեղձուցիչ միջավայրէն փախուստ»ը, բայց բոլորովին տարբեր է «ապաւինարան»ը: Երբ Վեռլէն մոռացումը կը գտնէր ալքովի շոգիներուն մէջ, իսկ Ռեմպոյ գայն կը փնտռէր փոքրիկեան փախուստին մէջ եւ Մալարմէ ալ գայն կ'որոնէր իր «փղոսկրեայ աշտարակին» մէջ՝ վերացական եւ ինքնանպատակ գեղեցկութեան պաշտամունքին հոչակումով, Տէրեան, իր հայ մարդու ուրոյն տրամաբանութեամբ նոյն վիշտերուն մոռացումն ու հոգեկան կազդուրը կը փնտռէր եւ կը գտնէր «Նայիրի»ին՝ իր «եթեմապատիկ խոց-

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Պատերազմը հակարուեստ կացութիւն է: Աստուծոյ կամքին ներհակ ուղղութիւն եւ Պատերազմը հակարուեստ կացութիւնն է: Աստուծոյ կամքին ներհակ ուղղութիւն եւ մղում ունին պատերազմական բոլոր մեծ կամ փոքր երեւոյթները, արարքներն ու գործողութիւնները: Ամէն ինչ կ'անշարժանայ, կ'անդամարուծուի, կ'ամայանայ...: Ես Մայրիներու Արմատներով պայքարեցայ պատերազմական վիճակներ դիմագրաւելու համար: Գիրք մը գրեցի խոովայոյզ հոգեվիճակի հանդարտ պահելու եւ մարդկային շնչառութիւնս չխանգարելու համար: Տասը արձակ երգեր ձօնեցի Լիբանանին՝ Մայրիներու յաւերժութեան ներշնչութեամբ: Խոհ եւ ապրում միաձուլեցի Փիւնիկեան այս երկրին Փիւնիկեան կենդանի պահելու ծառայող ու ձգտող բոլոր դրական շարժումներուն նպաստս բերելու միամիտ մտածումով: Ուրիշ ինչ ուժ ունի արուեստագէտը, գրողը, մտածողը բացի իր արուեստէն, գրիչէն, ներսոյց խոհերու արտահոսքէն: Պատերազմով աւերուող աշխարհի մը ոգեղէն կառուցումը կատարելու փորձ մը, ճիգ մը, հոգեպրկում մը: Հաւատարմով, սակայն, որ ըրածը ծառայութիւն մըն է հայրենիքին, անոր տեւականացումին, անոր բարոյական վերականգնումին:

Հայրենիքին գաւազները կորսնցուցած էին իրենց ուղին: Մարդկային արժէքները յարգող մարդկայնութիւնը: Բարոյական հարստութիւնը: Պատերազմը միայն չէնքեր ու կամուրջներ էջը քանդեր: Միայն փողոցներ ու պողոտաներ չեն ամայացներ: Քաղաքին ամբողջ ուրուական քաղաքի չէր վերածեր, այլ՝ մարդը կը հեռացնէր իր հարազատութենէն, կ'օտարացնէր ինքզինքն եւ հայրենիքէն, կ'ամայացնէր հոգին, կ'անջատէր իր ինքնութենէն...: Կ'առանձնացնէր...:

Գիրքով եւ արուեստով պատերազմը դիմագրաւելու օր մըն ալ ապրեցանք Լիբանանի պատերազմական առօրեային մէջ: Պատերազմի տարբեր հանգրուաններէն արդէն անցեր էինք եւ իւրաքանչիւր անգամուն նոր փորձութիւններու եւ օրհասական փորձանքներու վախերով ապրած...: Միջ-քրիստոնէական բախումներու հոտը արդէն մթնոլորտի մէջ զգալի էր: Մէկ վայրկեանէն միւսը բռնկելու լարուածութիւնը ելեկտրականացուցած էր կացութիւնը:

Օրը Կիրակի էր: Հրաւէր տրուած էր գրասէր եւ արուեստասէր բազմութեան մը, որ ներկայ գտնուի «Մայրիներու Արմատներ»ուն նուիրուած եւ անոր բովանդակութենէն ներշնչուած Փօլ Կիրակոսեանի գեղանկարչական ստեղծագործութիւններուն ցուցահանդէսին, որ կեանքով շնչաւորած էր Սահակեան Լ. Մկրտիչեան Գոլճի անկենդան սրահը: Առանց կացութեան անձկութենէն ազդուելու եւ անտեսելով ամէն մտավախութիւն, արուեստասէրներու եւ մտաւորականներու ընտրանի մը սրահը լեցուցած էր: Արուեստն ու գրականութիւնը յաղթած էին կացութեան ձգտուածութիւնը: Եկած էին քաջալերելու գիրքին հեղինակը եւ հաղորդուելու մեծ արուեստագէտին լիբանանեան ներշնչում-

ներուն: Հայ գրողին եւ հայ արուեստագէտին ներշնչման աղբիւրը Լիբանանն էր՝ իր Մայրիներու խորհրդանշով: Այս գիտակցութեան մղումով է, որ արհամարհելով պայմաններուն աննպաստ իրադրութիւնը, ընդառաջելով հրաւէրին՝ Թեմի առաջնորդը՝ Արամ Եպիսկոպոս Քէշիշեան պարտակալութիւն համարած էր ներկայ գտնուել: Ան իր ուշադրաւ եւ հոգեւոր ներկայութեամբ պաշտօնական հանդիսաւորութիւն կու տար ձեռնարկին: Ոչ ոքի ուշադրութենէն չէր վրիպեր, սակայն, օրուան կացութեան անյարիւր, դուրսի աշխարհէն խզուած, դուրսի աշխարհին այս հակադրութիւնը: Հոն, դուրսը լիբանանցի մարդիկ կը պատրաստուէին գիրար սպաննելու եւ յօշոտելու նախնադարեան մարդու բնագոյններով՝ հոս՝ ներսը երկու հայ լիբանանցիներ արարումներով կը ծառայէին Լիբանանի անդորրութեան, անոր գրաւիչ գեղեցկութեան պահպանման...:

Պահը ոգեղնչող եւ հոգեպարար էր արուեստին ներգործութեամբ: Առաջնորդ Սրբազանը ներշնչուած այս վերացնող պահէն կ'ըմբի իր խօսքը, որ կարելի է խտացնել հետեւեալ սեղմ արտայայտութեամբ:

- Մշակոյթի երկու սպասարկուներ, - Պօղոս-Պետրոս, - որոնք գիրով եւ աստուածահաճոյ արուեստով կը ծառայեն Լիբանանեանին:

Բազմութիւնը երբ Փօլ Կիրակոսեանի պատասխաններուն առջեւ, որ Լիբանանին ձօնուած նկարչա-կամ գեղատեսիլ համանուագ մըն էր, կը կախարդուէր Լիբանանով եւ իր վրձինի սքանչացնող վարպետութեամբ, դուրսէն կը հասնէին կապարներու ձայները (դեռ թնդանօթները չէին սկսած գոռալ), ներկաներէն մէկը, որ յայտնապէս մտահոգ ներկաներուն ապրած անձկութեամբ, վախը փարատելու եւ լարուած ձգտուածութիւնը մեղմացնելու բարի տրամադրութեամբ կը յարէր:

- Որսորդական հրացանագրակեր են... (Երջանը որսորդական վայր էր):

Մինչդեռ գարկերը ազդանշաններ էին բռնկումի մը: Սրահը աստիճանաբար կը պարպուէր: Հոն կը մնային միայն Փօլ Կիրակոսեանի մայրիներու արմատներով շնչող պատասխանները:

Յաջորդ օր, սովորականին պէս, առաւօտ կանուխ կ'ուղղուէի դպրոց, անգիտանալով օր մը առաջուան լարուածութիւնն ու ձգտուածութիւնը: Խաղաղ գիշերուան մը քունը գիտ խաբած էր...: Ծամբուս վրայ ալ մտահոգութիւն պատճառող եւ կասկածի տեղի տուող ոչ մէկ տեսարանի ականատես կ'ըլլայի: Դպրոցի սեմին ոտք կը կոխէի նախորդ օրուան ցուցահանդէսէն շարունակուող տրամադրութիւններու խայտանքով: Հագիւ սկսած էի դպրոցի աշխատանքներու պատրաստութեան, երբ գարկերու թնդիւնները սկսան լսուիլ: Խուճապի չմտնուեցայ: Այդպիսի պահեր շատ դիմագրաւած էի պատերազմի նախորդ բռնկումներուն՝ Հակառակ անոր սակայն, անձկալի մտահոգութիւնը պատեց գիւ...: Կապարներու տեղատարափին տակ դպրոցին փոխադրակառքերը մէկ-

մէկ մուտք կը գործէին շրջափակ: Վարորդներն ալ գիշերուան անդորրէն խաբուած էին...: Առանց սպասումի եւ վարանումի անմիջապէս ճամբեցի փոխադրակառքերը՝ աղօթելով որ անոնք առանց որեւէ փորձանքի եւ վտանգի աշակերտները իրենց տուները հասցնեն:

Իսկ ե՞ս: Ամայութեան մէջ մնացի առանձին: Մտայ մտմտուքի մէջ: Ինչեք չանցան մտածումներու ալքերէն...: Առանձնութեան մէջ տագնապեցնող մտահոգութիւնները հանգիստ չեն թողուր քեզ... մանաւանդ երբ կապարներու տեղատարափները եւ գարկերու թնդիւնները առաւել կը սաստկանային...:

Տնօրէնութեան սենեակս կղպեցի եւ պայուսակա առնելով քովը գտնուող աւելի ապահով թուող սենեակը ապաստանեցայ: Ինքնախաբէութիւն էր պարզապէս, աւելի ապահով սենեակ ու տեղ չկար...: Սպասեցի, որ կապարներու ձայներն ու թնդիւնները դադրին եւ ես ալ տուն վերադառնամ միանալու համար ընտանիքիս: Ի գո՛ւր սպասում...: Ծամբաները փակուած էին եւ կատարելապէս կղզիացած էի շրջապատէն: Ինքզինքս զբաղեցնելու համար կուտակուած թերթերու մնացած օրինակներ կը թղթատէի, երբ յանկարծ սենեակս խուժեցին գինեալներ սպառնական կեցուածքով: Խիստ ոճով հարցու-փորձեցին, որ ովքեր կան շէնքին մէջ: Վախն ու կասկածը մէջերնին էր եւ այլանդակած գիրքեր...: Արդեօ՞ք հակառակորդ կողմի գինեալներ կը գտնուէին:

Երբ հաստատեցին թէ ինձմէ գատ տնտես-պահակին ընտանիքը կայ միայն, գիտ առեւանգելով իջեցուցին տնտեսին սենեակը, հրահանգելով, որ տեղէս չշարժիմ: Սուս ու փուս գործադրեցի հրահանգը: Սպանութեան վտանգը ինձմէ հեռացած էր: Մտահոգութիւնս այլ ուղղութեամբ սկսաւ գիտ չարչրկել: Կինս եւ գաւազներս: Զիս դպրոց հասցնելէ ետք Արեւմուտք պիտի անցնէին...: Աս ալ ուրիշ՝ ներքնապէս կրծող մղձաւանջ մըն էր: Անցա՞ն, չանցա՞ն: Ու այդ մղձաւանջը ամբողջ օրը շարունակուեցաւ: Հեռաձայն չունէինք տակաւին տունը, որ կապ հաստատէի: Իրենցմով մտահոգուիլս չէր բաւեր, իրենց ինձմով մտահոգուիլս սկսաւ մտատանջել: Ո՛ւր մնացին արդեօք: Ո՞րջ եմ թէ մեռած...: Ոչինչ կրնայի ընել այդ պարտադրուած վիճակիս մէջ...: Տուն հասնելու արկածախնդրութեան ոչ մէկ միջոց կար: Մնաց որ արդէն առեւանգեալ մըն էի եւ տեղէս չշարժելու սպառնալիքը կը մրճահարէր հոգիս եւ միտքս:

Ուրիշ մուրի հարուածներու ձայներ եւս կը հասնէին ականջիս: Գետի կողմէ դպրոցին պատը կը քանդէին: Ինչո՞ւ կը քանդէին: Զէի պատկերացներ թէ ինչո՞ւ...: Միայն գիտէի, որ պատերազմը մարդու քնդիչ բնագոյնները սրելով ամենասանգուսպ վայրագութիւնները գործել կու տայ...:

Պատը քանդելով անցք մը բացած էին: Առանց տեղէս շարժելու կը նկատէի, որ մտնող-ելողներ կան հոնկէ: Կարծես բաներ մը կը փոխադրէին: Ստոյգ չէի գիտեր թէ ինչ կը փոխադրեն: Զայներ կը լսէի: Իրարու հետ եղած խօսակցութիւններէ շշուկներ: Անձկութեամբ կը հետեւէի...: Բնաւ չէի պատկերացներ, որ գողութիւն եւ կողոպուտ է ըրածնին: Գաղափարի համար գէնք բարձրացուցածները

չէի խորհեր, որ կրնան սրբապղծել գաղափարի նուիրականութիւնը եւ շեղելով գէնքի գործածութեան նպատակաուղղուածութենէն, նսեմանալ գողութեան ստոր արարքով:

Յերեկը անորոշ սպասումով անցրնելէ ետք, գիշերն ալ բոլորեցի երեւակայական վախերու անքնութեամբ: Քնանալ փորձելու ճիգերս ապարդիւն անցան: Միակ գիտ չարչարող մտածումը այն էր, որ գիտ սենեակէն ներս առեւանգեալ պահող գինեալները անգամ մըն ալ չերեւան...: Իրենց ընելիքը... ըրած էին:

Երկար գիշերը չզգացի, թէ ինչպէս լուսցաւ: Միայն զգացի, որ գինեալները հեռացած էին: Վախ պատճառող ձայները լուծ էին:

Առաւօտուն երկու անձեր յայտնուեցան: Առաջինը՝ դպրոցին կտրիճ պահակն էր, որ նախորդ օր աշակերտները հաւաքելու համար Toyota Van-ով գացած էր եւ չէր կրցած վերադառնալ: Երկրորդը՝ կինս էր, որ անապարած էր հասնիլ, ո՞րջ թէ մեռած ըլլալս ստուգելու համար: Զէր մոռցած հետը բերել «Ինսուլին» սրսկումի ասեղը: Անմիջապէս սրսկեց:

Ինձի համար զարմանալի ըլլալի չդադրեցաւ: Անպահովութեան բոլոր հաւանականութիւնները աչքը առնելով տունէն դուրս գալով քաջաբար հասած էր կուտակնձորի վայրը՝ դպրոց: Հերոս հօրը աղջիկն էր...:

Չղանդաղեցանք: Ոչինչ չպատահած՝ վերադարձանք տուն: Ընտանիքը միացաւ: Այդ օրը խաղաղ անցաւ: Ինքնախաբէութեան մը ուրախութիւնը պատեց գիտ: Մթննալու պէս մտայ անկողին: Խոնջած էի ու քնատ: Քնաբեր դեղ առնելու պահանջքը չզգացի: Մինչեւ յաջորդ առաւօտ կուտակուեցի քնացայ: Բայց, հազիւ արթնացած՝ զգացի որ մթնոլորտը դարձեալ ելեկտրականացած էր: Աչքերս յառեցի պատահանէն վար: Ի՞նչ տեսնեմ: Զինեալները սարսափ ազդող դիրքերով ոտքի էին: Շատ չանցած՝ սկսան կրակոցները: Սպառնական շեշտով հրամայեցին, որ պատուհանը գոցեմ եւ ներս անցնիմ: Հասկցայ, որ պատերազմին բնոյթը ուրիշ էր: Եղբայրը եղբօր դէմ, քրիստոնեան քրիստոնեային դէմ...: Նորէն Լիբանանի պատերազմէն դժոխային օր մը եւս սկսաւ...: Այս անգամ տունէ-տուն, տանիքէ տանիք: Զինեալներէն քանի մը հատը բարձրացան մեր տունը: Ստուգելէ ետք, որ իրենց հակառակորդներէն թաքնուած գինեալ չկայ... մէջերնին հայը յարեց:

- Զեգի համար բան չկայ...

Մեզի համար բան չկար, բայց արագահարուածներու եւ յետոյ թնդանօթներու որոտումը աւելի քան բան մըն էր: Սպանութեան վտանգը ամէն վայրկեան կախեալ էր մեր գլուխին...: Կը մտածէի հիասթափ... - Ինչ անհետեւ էր այս պատահածը... մահմետականը քրիստոնեային դէմ չէր, որ կը կուտէր, ո՛չ ալ քրիստոնեան՝ պաղեստինցիին, այլ՝ եղբայրասպանութեան արիւնը կը հոսէր...: Թէ-եւ, պատերազմի ամբողջ ընթացքին վրդովուծւա եւ ընդվզուծ չէի վերապահած այն վիճակին նկատմամբ, որ քրիստոնեան եւ մահմետականը նոյն հայրենիքի գաւազները չէ՞ն...: Հիմա, դարձեալ անմեղներու արիւնը կ'աղաղակէր երկինքին դէմ...: Երկինքի բաց պատահանէն Աստուած կը դիտէր ու կ'ափսոսար իր գաւազներուն


### ՄՈՒԱՑՈՒԱԾ ՄԻ ԳԱՐՏԱՐԱՊԵՏ

#### ՀԱՐՄԻԿ ՅԱԿՈՐԵԱՆ

19րդ դարի վերջում եւ 20րդ դարի սկիզբներին հայ մտաւորականների շարքում հազիւ թէ գտնուի մէկ ուրիշը, որի հիմնական մասնագիտութիւնը հիւսուած լինի քաղաքական, պետական եւ գրական գործունէութեան հետ, ինչպէս դա եղել է ճարտարապետ

ճարտարապետութիւնը: Նա որպէս ճարտարապետ աշխատել է Պաքուում, Պաթումում եւ Թիֆլիսում, կառուցելով հիւանդանոցներ եւ բնակելի բազմաթիւ շէնքեր:

Մեծահարուստ Բուդաղեանի (Բուդաղով) կտակի համաձայն ծրագրուում է Պաքուում կառուցել հայոց եկեղեցի: Քաջագնունին շա-



Պաքուում ճարտարապետ Յովհաննէս Քաջագնունու նախագծած կառուցուելիք Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս Առաքելայնների անուամբ հայոց եկեղեցու յատակագիծը եւ պատկերը, որն իր աւարտին չհասաւ

շինարար Յովհաննէս Մատթէոսի Քաջագնունու հետ:

Դժբախտաբար այս մեծ գործի անձնական արխիւը կորստեան է մատնել սակայն նրա դուստրը՝ Մարգարիտը կարողացել է գրել իր հօր կենսագրականը:

Յովհաննէս Քաջագնունին ծնունդ է 1868 թուի Փետրուարի 1ին Ախալքալաքում, հոգեւորականի ընտանիքում: Քաջագնունի ազգանունը նրա պապի Իգիթիանեան ազգանունան թարգմանութիւնն է: Նա իր միջնակարգ կրթութիւնը ստացել է 1877-1886 թ. Թիֆլիսում:

Յաջորդ տարի մեկնում է Պետրբուրգ եւ գերագանց նիշերով աւարտում է իր ուսումը 1893 թ.ին, դառնալով ճարտարապետ:

Համալսարանի հիմնադրութեան առթիւ կազմակերպուած մրցութիւն մասնակցելով, շահում է առաջին մրցանակ, իր թեման ընտրելով հայկական եկեղեցին, որի համար նա ուսումնասիրում է Անիի եւ Էջմիածնի եկեղեցիների

հելով մրցանակը անմիջապէս անցնում է աշխատանքի:

Բայց պայմանների բերումով նրան չի յաջողում աւարտել եկեղեցու կառուցումը եւ քաղաքական հանգամանքներից ելնելով 1911 թուին ստիպուած մեկնում է արտասահման, խոյս տալով Պետրբուրգում դատուելուց:

1914 թուին չնայած քաղաքական եւ պատերազմական խառն իրավիճակին, Քաջագնունին վերադառնում է հայրենիք մասնակցելու համար Հայաստանի առաջին հանրապետութեան ստեղծման համար մղուող պայքարին: Տարիներ չետոյ, 1921-1924 թուին, անտեսելով ամէն տեսակ վտանգ, վերադառնում է Խորհրդային Հայաստան: Հայրենիքում զբաղուած է շինարարական աշխատանքներով եւ միաժամանակ դասաւանդում է Երեւանի պետական համալսարանում, որի հետեւանքով ստանում է փրոֆեսորի կոչում: 1938 թուին բանտարկուում է եւ մահանում է անյայտ պայմաններ մէջ:

### ՐԱՅԵԼԻՆ ԸՆԴՄԵՁԵՆ

#### ԿԱՄԻԱԹՈՓՈՒՇԵԱՆ

Երբ ես փոքր էի Կիրակի օրերը՝ երբեմն, մեծ հայրս զիս կը տանէր «ճաղիկ հաւաքելու»: Ինծի համար այս մէկը կարծէք հեռաւոր արեւելք տանիլ էր, այսինքն՝ մանկական խելքովս կարեւոր պտոյտ եւ ծրագիր էր, գորս մեծ հայրս կը կատարէր ՄԻԱՅՆ ինծի համար:

Բայց, սիրելիներ՛ր, «ճաղիկ հաւաքելու» այդ ՄԵՍ գաղափարը միայն կէս ժամնոց ճամբայ մըն էր, Անթիլիասի մէջ՝ բարձրունքի մը վրայ, ուր ընդամէնը կրնայի միայն նապաստակի ականջ քաղել:

Եւ դուք պիտի տեսնէիք իմ ուրախութիւնս եւ իրարանցումս, թէ ինչ պէտք է հագնիմ, թէ ո՛վ մեզի պիտի ընկերակցի, թէ ինչ ուտելիք պիտի տանինք... եւ այլն, եւ այլն, եւ այլն: Այդ օրը աշխարհը ինծի կ'ըլլար...

Ահաւաստիկ այդ եղելութեան վրայ անցած է տարիներ. ա՛լ ոչ մեծ հայրս կայ, ոչ ալ այդ Անթիլիասի բլուրը:

Երեւակայեցէ՛ք, երբ նապաստակի ականջ կը քաղէի այդտեղ, այդ փոքր բլուրը ինծի կը թուէր հսկայական անտառ մը, ուր կրնայի գտնել աշխարհի վայրի անասունները, ինչպէս՝ առիւծ, բազէ, վագր կամ նոյնիսկ կ'երեւակայէի, թէ ծառի մը ետեւէն յանկարծ նապաստակ մը պիտի ցատկէ:

Բայց խորքին մէջ այդպէս չէր, պարզապէս մանկութեան երեւակայութիւնս էր, որ զիս կը խաբէր ու կը հետաքրքրէր:

Այս անմոռանալի յիշատակը մինչեւ օրս կը մնայ իմ սրտիս ու մտքիս մէջ, եւ կը մաղթեմ, որ ամբողջ աշխարհի փոքրերը ունենան նման պարզ ու խորհրդաւոր յիշատակներ:

Անցեալները, երբ ինքնաշարժովս ժողովի կ'երթայի, պատահմամբ անցայ այդ «ճաղիկ հաւաքելու» բլուրին շրջանէն, եւ ՄԻԱԿ բանը, զոր տեսայ, հսկայական շքեղ ճաշարան մըն էր, որ արդէն 4 տարիներ առաջ կառուցուած էր այն վայրը, ուր ես մեծ հօրս եւ մեծ մօրս հետ նապաստակի ականջ կը քաղէի:

Կանգ առի պահ մը, եւ վայրկեանի մը համար այդ անմոռանալի յիշատակը մտքիս մէջ սկսաւ պղտորիլ, մինչեւ որ կորսուեցաւ եւ անհետացաւ, պարզապէս որովհետեւ խումբ մը ԱԳԱՀ մարդիկ կ'ուզէին աւելի ԴՐԱՄ շահիլ ու ԴԻՋԵԼ...

Իրաւապէս զգացուած էի եւ յուզուած, իմ մանկութեանս ամէնէն պարզ ու յիշատակելի »դրախտս« քանդած էին եւ փոխարէնը կառուցած էին... Ի՞նչ... ծառերն ու ճաղիկները կոտրելով՝ ի՞նչ կառուցած էին. տուփի նման

քարէ ու ապակեայ ճաշարան մը, որուն նմանը շատ կայ ամէնուրեք: Այս ամէնը ի գուր է խօսիլը, եղածը եղած է:

Սակայն ուզեցի այս մէկը բաժնեկցիլ ձեզի հետ՝ ցոյց տալու համար որ այսօր նոյնն է պարագան մեր բոլորին հետ, մեր բոլորին շուրջ:

Այսօր ծառ եւ ծառաստան հագուագիւտ է գտնել մեր շրջապատին մէջ, փոխարէնը մենք հեռաւոր վայր մը պէտք է մեկնինք, որպէսզի տեսնենք քանի մը թոշմած եւ խղճալի ծառեր:

Անցեալին Լիբանանը ծանօթ էր «Կանաչագարդ եւ դալար» անունով, իսկ հիմա ինչո՞վ ծանօթ է եւ ի՞նչ բաներով կը յատկանշուի:

Սիրելի՛ ընթերցողներ, երբ պատշգամ ելլեմ, «պճեղ» մը երկինք կամ կանաչութիւն տեսնելու եւ մաքուր օդ շնչելու փոխարէն կը շնչեմ ապականութիւն, կը տեսնեմ մոխրագոյն ծուխ, շէնքեր ու ինքնաշարժներ ամէնուրեք:

Չեմ գիտեր՝ արդեօ՞ք այս ԱԳԱՀ մարդիկը երբեւիցէ չե՞ն մտածած պարտեզներ կառուցելու մասին կամ երբեւիցէ չե՞ն մտահոգուած իրենց խղճով, թէ երբ աշխարհը քանդեն եւ վերածեն քարէ ու մեքենաներով լեցուն երկրագունդի մը, իրենց համար տեղ պիտի չմնայ այլեւս քանդելու եւ կառուցելու: Նաեւ՝ ընդհակառակն չե՞ն մտահոգուիր, թէ թաղուելու վայր իսկ պիտի չունենան, այլ պիտի մնան քարէ կամ տախտակէ տուփերու մէջ եւ «ձող էինք եւ հող ալ կը դառնանք» խօսքը պիտի վերածուի «ձող էինք եւ տախտակէ տուփի մէջ ալ կը մնանք»-ի:

Այս մարդիկը չե՞ն մտահոգուիր կամ չե՞ն մտածեր ապագային մասին նախքան քայլ մը առնելը:

Սիրելիներ՛ր ներեցէ՛ք՝ երբեմն ծայրայեղութեան ստիպուած եմ դիմելու, որպէսզի հեռաւոր ապագան քիչ մը աւելի շուտ եւ արագ տեսնենք: Եւ այդ հիման վրայ աշխատինք՝ աշխարհը քիչ մը աւելի լաւ վայր մը վերածելու կամ նոյնիսկ պահպանելու մեր շուրջը գտնուող իւրաքանչիւր գեղեցիկ տարր:

Սիրելի՛ ընթերցող, որեւէ նման հարցեր, որոնք կը մտահոգեն քեզ շրջապատէ՛ք ներս, կրնաս ուղարկել այս ի-նամակի հասցէին՝ gassia.topoushian@gmail.com, որպէսզի միասնաբար գրուեցենք եւ լուծենք այն, ինչ որ մտահոգիչ է շրջապատէն ներս:

Յիշեցնեմ, որ հարցի մը լուծումին կէսը իր յայտնութեան մէջ է, այսինքն՝ երբ մենք բացայայտորէն գիտակցինք եւ խոստովանինք մեր հարցերը, ինքնաբերաբար հարցին կէսը լուծած կ'ըլլանք: Շնորհակալութիւն:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծահասակներու եւ մտնուկներու Քայքայիչաբարբ բուժում:  
Գլխացուտ, վզի, մէջքի, յօդադիւն եւ սկզբնային ցտեղի:  
Ինքնաշարժի վնասի նեւեակներով պատահած վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

# ՆՈՐ ԳԻՐՔԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՒ ԽՄԲԱԴՈՐՈՒՄ

Վերոյիշեալ գիրքը աշխատասիրած է Գէորգ Սրկ. Փանոյեան: Իսկ հրատարակուած է Հարաւային Գալիֆորնիոյ Համալսարանի Հայագիտութեան ուսումնասիրութեանց բաժանմունքի կողմէ (մատենաշար թիւ 1):

Կլենտէյլի «Դրագարկ» տպարանէն 2009 թուին լոյս տեսած այս գեղատիպ հատորը կը բաղկանայ շուրջ 110 էջերէ:

Աշխատասիրող Գէորգ Փանոյեան հատորի սկիզբը իր շնորհակալութիւնները կը յայտնէ դոկտ. փրոֆ. Հրայր Տէքմէճեանին, երաժշտագէտ Սիրվարդ Նշանեանին եւ յայտնի խմբավար Վաչէ Պարսումեանին, ինչպէս նաեւ Արժ. Տ. Արշակ Աւ. Քհնյ. Խաչատուրեան եւ դոկտ. Հրանդ Աճէմեանին:

Այս առթիւ թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան իր նամակին մէջ յատկապէս նշած է «օգտակար աշխատութիւն մըն է, որուն համար մեր խորին գնահատութիւնն ու երախտագիտութիւնը կը յայտնենք ձեզի:

Արդարեւ, թերթատելով գիրքը հոն կը գտնէք մասնագիտական բացատրութիւններ շարականներու եւ շարականագիրներու ինչպէս նաեւ



շարականներու եղանակներու խմբաւորումներու մասին: Սոյն օգտաշատ ուսումնասիրութեան մէջ առանձին էջեր տրամադրուած են եւրոպական նօթագրութեամբ տպագրուած շարականներու:

Սոյն շահեկան հրատարակութիւնը կրնայ նաեւ օժանդակ դասագիրք ծառայել Հայաստանեայց եկեղեցւոյ շարականներու ուսուցման գծով:

## ԱՌԱՋԻՆ ՇԱՐԱԿԱՆԱԳԻՐՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Գրելու գիւտէն անմիջապէս ետք Սահակ Կաթողիկոսը եւ Մեսրոպ Մաշտոցը ձեռնարկեցին Աւետարանի թարգմանութեան, եւ միաժամանակ շարականներ յօրինեցին:

Պատմութեան գիտէնք որ երկիրը կը գտնուէր ծանր, դժուարին, ճակատագրական պայմաններու մէջ:

Աւետարանի թարգմանութիւնը խիստ անհրաժեշտ էր եւ քրիստոնէութեան արմատաւորման եւ ժողովուրդի ազգային դիմագիծը անաղարտ պահելու համար: Քրիստոնէութիւնը որ դեռ դիմադրութեան կը հանդիպէր, պէտք էր որ ամրապնդուէր, այլապէս ազգային աղէտ մը կրնար վրայ հասնիլ: Պարսիկները իրենց ամբողջ յոյսը դրած էին այդ ճախողութեան վրայ: Իսկ միւս կողմէ, եկեղեցիին հակակախութիւնը յունական ազդեցութեան հետ պահելը ռազմավարութեան մէկ այլ քայլ էր:

Բիւզանդական կայսրութիւնը, իր շահերէն ելլելով, քաջալերած էր հայերու դէպի քրիստոնէութիւն դարձը, բայց պայքարած որ այդ դարձը ըլլայ գոտ հելլենական (ոչ ասորական) ազդեցութեամբ կամ միջամտութեամբ: Անհաւատալի է բայց փաստ, որ իր շահերէն ելլելով, բիւզանդական կայսրութիւնը դաշնակցած է Պարսկաստանի հետ հայերը միասնաբար ճնշելու համար:

Մինչեւ գրեթե գիւտը Հայաստանի մէջ տիրապետող գրական լեզուն յունարէն էր. հայ մտաւորականները յունարէն կը խօսէին, իսկ հայ քարոզիչները յունարէնով կը քարոզէին: Հայութեան համար այդ օրերուն յունարէնը երկայրի սուր էր եւ պէտք էր օգտուել անկէ, անոր հարուստ պաշարներէն, եւ պէտք էր զգոյշ ըլլալ անոր գերակշիռ ազդեցութեան տիրակալութեանէն:

Առաջին քայլն էր Աւետարա-

նը թարգմանել եւ բոլոր աղօթքները, քարոզները, պատարագը եւ հոգեւոր երգերը գրել հայերէն լեզուով եւ երգերու եղանակները յօրինել հայ ժողովուրդի ակունքներէն եկող երգարուեստի աւանդույթներուն հիմքով:

Սահակ Կաթողիկոս-Մեսրոպ Մաշտոց գոյգը այդ մեծ, սուրբ գործը գլուխ հանեցին պատուով:

### ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԻԼԵՐԸ

Ութ ձայն եւ 2 Ստեղի եղանակային համակարգով գրուեցան առաջին շարականները Սահակ Պարթեւ եւ Մեսրոպ Մաշտոցի կողմէ:

Առաջին շարականագիրները այս 10 եղանակներու համակարգը որդեգրելով հանդերձ՝ չկաշկանդուեցան անորմով, որովհետեւ այդպէս ընելով թէ իրենք իրենց, եւ թէ յետնորդներուն համար պիտի սահմանափակէին այլ եղանակներով գրելու հնարարւորութիւնը: Ընդհակառակն, անոնք ճոխացուցին մեր երգարուեստը՝ որոշ շարականներու եղանակներուն տալով «դարձուածք» անուանումը: Նաեւ, շարականներ գրեցին բուն ձայնէն տարբեր, «ծանր» եղանակներով, երբեմն ձայնին անունը բնորոշող եղանակին մօտիկ հնչող սակայն անոր տարբերակը եղող եղանակով, եւ երբեմն ալ ձայնեղանակէն բոլորովին տարբեր եղանակով:

Սա եղաւ ազատ ստեղծագործելու ուղեցոյց մը նաեւ յաջորդ սերունդներուն համար, որոնք առաւել եւս ճոխացուցին մեր հոգեւոր երգարուեստը:

Հետաքրքրական է գիտնալ թէ շարականներու եղանակները, որոնք մենք այսօր կ'երգենք եւ կը նուագենք եւրոպական ձայնագրութեամբ, արձանագրութեան ինչ փուլերէն անցած են մինչեւ մեզի հասնիլը:

## ԾԻԾԱՂ ՓԼԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՏԱԿԵՆ

### ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ամիսներ առաջ, Սուրբոյ Հայկ պաղարքի մէջ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Սրբոց Քառասնից Մանկանց Սուրբ Մինասի նկարէն եւ խաչքարէն հոսող իւղը ծիծաղ պատճառեց անոնց, որոնք չունին Լոյսը՝ Շնորհքին, տեսնելու հրաշքը որ կը կատարուէր օր ցերեկով:

Հրաշք մը, որուն այիքները տարածուելով ովկիանոսներէն անդին, հասան աշխարհի ամէն մութ անկիւնները:

Ու այդ մութ անկիւններու խաւարամիտ մարդիկ մինչ կը ծիծաղէին կատարուած անբնական իրողութեան վրայ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը իր հոգեւորականաց դասով կը փութար հրաշքի վայրը, եւ աղօթք կը բարձրացնէր առ Աստուած:

Այսօր, ամիսներ ետք, մոռցած ենք պատգամը Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ հրաշքին, եւ կրկին Աւետարանի ճշմարտութիւնը յարմարցուցած մեր սուօրեայ կիսնքին ինկած ենք հացի ճամբուն վրայ:

Այսօր, Հայիթիի ահարկու

երկրաշարժէն աւելի քան շաբաթ մը ետք, փլատակներու տակէն տակաւ կը հանեն ողջ մարդիկ, երախաներ եւ կիներ... ու աշխարհով մէկ բոլոր լրատուական հաղորդումներով բարձրաձայն կ'աղաղակեն մէկ բառ... ՀՐԱՇՔ:

Ո՞ր անգութ սիրտը կը ծիծաղի փլատակներու տակէն անգամ պոռթկացող այս հրաշքներուն դիմաց:

Հրաշքներ կը կատարուն ամէն օր, մեր շուրջը, եթէ միայն աչք ունինք տեսնելու ականջ՝ լսելու ձայնը հրաշքներուն:

Խաւարամիտ մարդիկ, որոնք արդիական եւ գիտուն երեւնալու մարմաշէն տարուած, կրնան շարունակել իրենց ծիծաղը բարձրաձայն... նոյնիսկ Հայիթիի անմեղ զոհերուն հաշտոյն... մինչ՝ հրաշքին հաւատացող մարդիկ, աղօթքը շրթներուն վրայ Ամենողորմ Տիրոջ Ողորմութիւնը կը հայցեն փառաբանելով եւ օրհնաբանելով Տէրը յամենայն ժամ:

Հրաշք բառը իր ճառագայթումով, սողատակի իմաստներ չունի: Մի փնտռէք:

## ԻՐԱՔՈՒՄ ԶՈՐՈՒՄԾ ՀԱՅ ՆԱՐԱՏԱԿՆԵՐԻՆ

(Նուիրում եմ Իրաքահայ Հայաստան աշխարհի նորագոյն շինարար Վահագն Յովնանեանի շառաւիղների, հայ նահատակների յիշատակին) ԱՆԱՅԻՏ ԵՐԵՄԵԱՆ

Նրանք ընկան հայրենի բարձրունքներից շատ հեռու, Օտար հողին խառնուեց նրանց արիւնը բոսոր, Նրանք ընկան գլխիվայր, իբրեւ հպարտ եղջերու, Որպէս աստղեր երկնային իբրեւ երազ լուսաւոր, Նրանք ընկան որպէս գի ազատութիւնը ապրի, Որ բիրտ հողմերը վայրագ յաւերժօրէն համրանան Որ ճանապարհը սիրով մինչեւ աստղեր երկարի, Որ խաւարները բոլոր ժայռերի պէս քարանան:

Նրանք ջահել ու յախուռն, առիծի պէս կռուեցին, Ատեցին մահը անգամ ու գնացին նրա դէմ, Իրենց պատիւը իբրեւ լոյս ու դոշ պարգեցին, Ու խոյացան դէպի վեր, դէպի երկինք ու եղեմ: Նրանք հայի արիւնով ընկան հողում Իրաքի: Վերջին պահին իրենցից շանթեր էին արձակում, Թող իրենց լոյս հոգու մէջ հողը յաւերժ ճառագի, Ասես նրանք կռուեցին հայոց անմահ Արցախում:

## ՊԱՏԳԱՍ

### ԶՕՆ ԶԱԲԱԿՆԵՐԻՍ... ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Դուք սիրալիր իմ գաւակներ Զեր ճամբան է վառ ու պայծառ Դուք մի վիատուէք փորձանքներից Յոյսով կառչէք ապագային... Եաշակեցէք սիրոյ գինին, Հաւատացէք ձեր մեծ կամքին, Դետը քայլէք ժամանակի Որ դուք հասնէք յաղթանակի... Պատգամում եմ լի յոյսերով Անեղծ ապրէք դուք ձեր կեանքում.

Զը մոռանանք բարքն հայեցի Ու մայր լեզուն սուրբ Մաշտոցի... Սեր ցանցեք անգամ հողին, Որ կեանքի ծառն՝ բերքաւորուի. Լաւ իմացէք անկեղծ ոսկին Ո՞ր որ գցես՝ իր գինն ունի... Զեզ ենք նայում, ձեր լոյս ճամբին, Փայլ տուէք, ժանգած երկաթին, Ու այն սիրով, պտղուց հացից, Բաժին հանենք քաղցածներին...

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**  
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA  
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



### ՎԱՐԱՆ ՏԵՐԵԱՆ

#### Շարունակում է 13-էն

ուած Տիրամայր» հայրենիքի գործովանքին մէջ: «Նայիրի» Տէրեանի քերթողական աշխարհին մէջ ինքնուրոյն տիեզերք մըն է, ուր յաճախ կ'ապաւինի բանաստեղծին հիւանդ ու տառապոյ հոգին, հոն սուգուելով, զտուելու, մաքրուելու համար:

... «Մշուշի միջոց... տեսիլ՝ դիւթական

Բացում է կրկին Նայիրի տրտում:

... Քեզ հետ եմ կրկին.- իջնում է անդորր,

Անտուն, թափառիկ յոգնած իմ հոգում:

Գիտես դու մեղմել եւ ցաւ եւ խոլում

Ու վանել սրտից տրտունջն անօրոր»:

*Հպարտութեան եւ յոխորտանքի ո՛չ մէկ հետք կարելի է գտել այս տեսլականացումին մէջ, որով, նաեւ ոչ մէկ թեքում դէպի ազգայնամոլական քարոզչութիւն: Այլ՝ միմիայն սրտցաւ զրոյց մտերիմ եւ գորով անսահման:*

«Դու հպարտ չես իմ հայրենիք,

Տրտում ես դու եւ իմաստուն, Կիզում է քեզ մի հուր կնիք Մի հրամայող ու հին խոստում:

Եւ միթէ այդ վշտիդ համա՞ր Չեմ սիրում քեզ այսպէս քնքուշ եւ խոնարհուում քեզ պէս յաճառ,

Օ՛, հայրենիք՝ դառն ու անուշ»:

*Համակ սէր ու գուրգուրանք է Տէրեանի վերաբերմունքը հայրենիքին հանդէպ, վիշտ ու մորմոք՝ ցաւատանջ ճիշտ ցասումի. «Մի՞թէ վերջին պոէտն եմ ես Վերջին երգիչն իմ երկրի, Մա՞հն է արդեօք թէ Գի՞նջը քեզ Պատել, պայծառ Նայիրի»:*

*Անշուշտ տկարութեան եւ վհատութեան պահ մըն է այս հարցադրումը եւ այնքան բնորոշ՝ մեր ազգային օրհասին դիմաց: Սակայն տեսանողը, «վաղուայ ցնծութեան գուշակ» բանաստեղծը շուտով պիտի վերագտնէ իր հոգեկան կորովը, ծառանայ պիտի սեւ ճակատագրին դէմ եւ գօտեպնդման կոչ արձակէ նաեւ.*

«Ժամն է, եւ Եւրոպիայ իմ ծիրանավառ,

Ձրահաւորուիր խանդով խնդագին,

Վառիր երկունքի գիշերում խաւար

Յրով մկրտուած նայիրեան հոգին»:

*Տէրեանի մօտ, բանաստեղծական սին ցնորք կամ գեղում չէր վերագարթնումի այս կոչը, այլ՝ ընդհակառակը, խոր հաւատքն էր ու գործունէութեան հրաւէր՝ քաղաքացի-հայրենասէր, պետական մարդուն, որ հեռատեսութեամբ կանխածրագրեր էր հայրենիքի փրկութեան ուղին եւ գայն կապեր՝ իր հաւատացած ընկերվարական ընդգրկումին հետ:*

*Սէրը՝ իր բոլոր հանգրուաններով, տենչով ու երազանքով, խինդով ու թախիծով, կացութիւններով ու անուշ պահերով, բարձրանալով ու հետշտանքներով, փնտռողով եւ տառապանքով դարձաւ շարժիչ ոչոն ու ներշնչարանը տէրեանական քերթողութեան: Դարձեալ հպատակ՝ դառն ու անուշ երանգաւորումի եւ ալեւորումի:*

*Տառապանքը սիրոյ անբաժան ստուերն է, կ'ըսուի: Գոնէ*

*Տէրեանի սիրերգութեան մէջ ճշմարտութիւն է այդ: Տառապանք՝ անտարբերութեան, մերժումի, պէրանքի, անհասկացողութեան, անգութ խաղի ու նախանձի դէմ յանդիման: Բայց այդ տառապանքն իսկ, Տէրեանի մօտ կը քաղցրանայ սիրոյ իր առկայութեամբ իսկ, որ ամբողջական չգոյութեան պարագայէն գերադասելի է, որպէս փրկութեան լաստ՝ ընդդէմ կեանքի ծանծաղութեան, գորշ առօրեաններուն: Այս պատճառով ալ դառնութեան կամ անէծքի տեղ չկայ տէրեանական քերթողութեան մէջ:*

«Ես կը գամ, երբ կը լինես տրտում,

Երբ երազներդ յաւետ կը մեռնեն,

Ձեռքդ կը բռնեմ, ցաւդ կ'ըմբռնեմ

Կը վառեմ ուրիշ լոյսեր քո հոգում:

... Ես լուռ կը թաղեմ իմ ցաւը միակ,

Ձուարթ կը ժպտամ բախտաւորի պէս,

Երբեք չեմ բանայ սրտիս մուրթ փակ,

Երբեք չեմ յայտնի իմ տանջանքը քեզ,

Որ պայծառ ժպտաս կեանքի երեսին»:

*Բիւրեղի պէս վճիտ, ժայռերէն իջնող ջուրի շիթերուն պէս գուլալ այս տողերը արդէն կու տան իրաւունք Տէրեանին դառնալու մեր ամենէն ամբողջական եւ լիարիւն սիրերգակ բանաստեղծներէն մէկը՝ բախտաւորուած ամենաժողովրդականը ըլլալու պատիւով: Վկայ՝ պատկառելի թիւը երգի վերածուած եւ տակաւին երգող իր սիրոյ քերթումներուն:*

*Սիրոյ, ներողամտութեան, նուիրումի եւ գոհաբերութեան այս ոգին, ներշնչարանն իսկ է տէրեանական միւս հիմնական յատկութեան՝ մարդասիրութեան եւ բնութեան պաշտամունքին: Բնութեան սէրը, անոր խորհուրդ խորինը Տէրեանի մօտ ոչ թէ որպէս տեքօր կամ շրջանակ գործածուած է, այլ՝ որպէս շնչող, ներշնչող, հոգեկից եւ խորհրդակից գոյութիւն, ուր կ'արտացոլուին բանաստեղծին հոգեկան ապրումներն ու հոգեվիճակները իրենց նմանողութեամբ: Բնութիւնը ապրող, կենդանի տարր է որուն հետ երկխօսութիւն կը հաստատուի եւ որմով մտորումներ եւ խոհականութիւն կը ձեւաւորուի: Այսպէս՝ գարուն, աշուն, գիշեր, վերջալոյս, մշուշ, ծաղիկ ու ծառ ըմբռնումները միացած են խինդի, թախիծի, կարօտի, երազանքի, քնքանքի, նրբագեղութեան եւ չիշտակի խորհրդանիշին հետ եւ ներկայ են գրեթէ ամէն քերթումի մէջ, մշտանորոգ եւ անկրկնելի նրբութեամբ, ստեղծելով եւ ջերմացնելով պահն ու մթնոլորտը, ուր մարդը կը մարդկայնանայ բնութեան կախարդանքին մէջ, կը դառնայ հաշտ ինքն իր հետ.*

*Տէրեանի սէրը մարդոց հանդէպ նախ ծորող բարութիւն է, ապա՝ վճիտ հոգիէն բխող լոյս՝ գորս բանաստեղծը կ'ուզէ անխտիր բաժնել ու տարածել բոլոր մարդոց: Երբ երջանիկ է սիրով եւ հարուստ՝ բնութեամբ, իր երջանակութեանն ու սէրէն կը ձգտի բաժնի հանել բոլոր մարդոց.*

«Անհուն աշխարհում բացսիրտ, ազատ

Ողջունելով սիրով անց ու դարձողին,

Օրհներգել կեանքը, աշխարհիմ ժպտալ,

Յարագատ լինել ջրին ու օդին եւ անհուն սիրել ու գթալ...»:

*Հոս, մարդոց հանդէպ սէրը տակաւին վերացականի հով մը ունի եւ անպայման գեղուն տրամադրութեան արդիւնք է: Նոյնիսկ միամիտ է ու կրաւորական: Սակայն հետզհետէ կեանքին եւ շրջապատին հետ սերտ շփումով իր մարդերգութիւնը կը մերձենայ գիտակցուած, կողմնորոշուած եւ մասնաւորուած անսպառ սիրով՝ բոլոր գրկուածներուն եւ «կեանքի որբերուն հանդէպ:*

«Ախ, ես սիրում եմ այդ վշտածորար

Դէմքերը դաժան՝ տառապած մարդոց,

Կեանքի որբերը... վշտերով սնուած

Փշոտ ճամբէքից ոտքերը արնոտ,

Մարդկանցից մերժուած, բախտից հալածուած

Յոգուս եղբայներ, սեւ կեանքի որբեր

Եկէք իմ գիրկը, գուրգուրեմ ես ձեզ...»:

*«Բարի սամարացի» յուշող այս դժբախտասիրութիւնն ալ սակայն, շուտով պիտի հունաւորուի դէպի դասակարգային գիտակցութիւն եւ կողմնորոշում: Մոսկուայի Լազարեան ձեմարանի իր շրջապատը եւ բարձրացող ուսական բանտրական յեղափոխութեան ալիքը հետզհետէ պիտի ներգրաւեն բանաստեղծին համակրանքն ու ապա զինուորագրեն զինք գործօն մասնակցութեամբ.*

«Իմ մեծակութեան անապատներից

Լսեցի յանկարծ ահազանգներ

Ղօղանջը ահեղ, եւ նոր տենչեների

Պայծառ հրդեհը իմ սիրտը այրեց:

Ու իմ փոշեպատ քայլերը մոլար

Դէպի քաղաքը դարձան վերստին,

Ուր ձայնում էին կռիւր վերջին, Ուր կռում էին աղմուկ ու ժխոր»:

*Փարատքսի պէս բան մըն է Տէրեանի հորիզոնին այս յեղափոխումը «Մթնշաղի Անուրջներ»էն մինչեւ յեղափոխական սա յաղթերը, որուն պարունակն ու միջուկը եթէ տակաւին չունին տէրեանական երգերուն յատկանշական նրբագեղութիւնն ու երանգաւորումը, բայց արդէն անպայման ունին կռուցիկն ու տեսիլքը նոր մարդկայնութեան եւ նոր գրական հորիզոններու: Հոն, արդէն լսելի են ոտնաձայները վաղուայ Չարենց վիթխարի բանաստեղծին: Ինչ խօսք որ յեղափոխական գործիչի, պետական մարդու նոր հանգամանքները եւ հետզհետէ ծանրացող անողոք հիւանդութիւնը ժամանակ եւ առիթ չընձեռեցին Տէրեանին՝ խորացնելու, զարգացնելու նոր բանաստեղծութեան իր ուրուագծուող ուղիները:*

*Ա՛լ պալքարի, յեղափոխութեան, վերագարթնումի երգիչն է Տէրեան, որ իր մարդու եւ հայ հաւաքականութեան ճակատագիրը անվերադարձօրէն կապած է դասակարգային յեղափոխութեան եւ ըստ այնմ ալ կերպարանփոխած բանաստեղծական իր հորիզոնն ու*

*ոճը, նոր առաջադրանքներով. «Խօսքդ պիտի լինի դաշոյն, սիրտդ կրակ ահաւոր», կը պահանջէ ան իր գրիչէն: Լաւատեսութեան ալիքն է որ կը փոխարինէ ա՛լ իր թախճոտ երգերը.*

«Իմ երկինքը հիմա բացուած է, Բացուած է հուրերի ծով, Իմ աչքերը հիմա լցուած են Լցուած են գուարթ ոսկով: Կարկաչում են գարնան ջրերը, Երգում են բարակ հովեր, Արեւոտ են գարնան օրերը, Թելեր իձն, ոսկի թելեր...»:

*Տէրեանի քերթողութեան խորքին այլազանութիւնը, հոգեվիճակներուն եւ ապրումներուն հարստութիւնը անշուշտ չէին կրնար իրենց ազդեցութիւնը դրոշմած չըլլալ նաեւ բանաստեղծական ձեւին, լեզուին եւ ոճին վրայ: Անոնք, առաջին հերթին կը յատկանշուին բացառիկ երաժշտականութեամբ: Ձեւի գլխաւոր այդ «փոխադրամիջոց»ը էական այն տարրն է որմով պիտի ստեղծուի պահն ու մթնոլորտը եւ անով պիտի փոխանցուին ապրումն ու յուզումը: Իր նշանաւոր «Յրտահար, հողմավար, դողացին մեղմաբար, տերեւները դեղին, պատեցին իմ ուղին...»ը ամենէն յատկանշականն է այդ ուղղութեամբ: Աւելի ուշ, խորանալով Նարեկացիի լեզուական ներքին հնչականութեան եւ կռուցիկին՝ («Մով ի ծով ծիծաղախիտ ծաւալանայլ») ան պիտի զարգացնէր մեր լեզուին երաժշտական նոր կարելիութիւնները, լաւագոյնս կարենալ արտայայտելու համար նոր, ժամանակակից մարդու ներաշխարհն ու ապրումները: Այսպէս, երաժշտականութիւնը իրմով հաստ սահուն համհնչականութեան ցարդ չ գերազանցուած նրբութիւններու, ուր զգացումին եւ խոկումին առնչութեւր մեր ունկերն ալ օրօրուեցան ձայնային թաւալանութեամբ: Այսպէս, օրինակի համար ան յաջողցաւ միայն «շ» տառին օգտագործումով մեզի փոխանցել աշնան ֆիզիքական եւ ձայնային ընկալումը, համադրուած՝ բանաստեղծին հոգեվիճակին ու թախիծին շօշափելի տպաւորութեամբ.*

«Այնպէս մշուշում շուրկ ու շուրկն,

... Անտես ու յուշիկ իմ շուրջը շրջում

Եւ շշուշում ես, եւ անուշ շրջում...»:

*Նոյնպէս՝ ձայնաւորներու դասաւորումով կազմուած սա առնական հնչեղութիւնն ալ.*


«Այս տանջող, այս ճնշող ցաւի մէջ,

Գիշերում այս անշոյն, Արդեօք կա՞ր իրիկուայ մոռացման,

Մոռացման ոսկէ շող...»:

*Այս ներդաշնակ նմանաձայնութիւնը բնաւ ճարտարութեան մարզանք չէ եւ ոչ ալ պաճուճանք, այլ բանաստեղծութեան ներքին հոսքն է, տարբերը հոսանում, որմով կը բացուին բանաստեղծութեան կախարդականքն ու իմաստը:*

*Տակաւին այսօր ալ, զարմանալի թարմութեամբ, առանց կնճիռի, միշտ վճիտ ու պայծառ՝ կը հնչեն Տէրեանի քերթումները, երիտասարդական ապրումներու նոյն յոյզերով եւ քնքշութեամբ, համակելով արդի մարդն ալ, փոխն ի փոխ, կարօտի իր մեղմ թախիծով անոյշ եւ գարնանային շողով ու շողով:*



# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՄԲԻՇՆԵՐԸ ՆՈՒԱՃԵՑԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԳԱԽԱԹԻ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼՆԵՐԸ



Հայաստանի յունահունիստական ոճի ըմբշամարտի հաւաքականը նուաճեց Երեւանի Կարէն Դէմիրճեանի անուան մարզա-համերգային համա-լիբրում աւարտուած յունահունիստական ոճի ըմբշամարտի աշխարհի գաւաթի պրոնզէ մետալները՝ 3-րդ տեղի համար մրցապայքարում 4:3 հաշուով դրամատիկ մրցապայքարում յաղթելով Ռուսաստանի խումբին: Աշխարհի գաւաթակիր դարձաւ Իրանի հաւաքականը, որ եզրափակիչում 4:3 հաշուով յաղթեց Թուրքիայի խումբին:

Երկու օր շարունակ Կարէն Դէմիրճեանի անուան մարզահամերգային համալիբրում թէ՛ գօտեմարտեր էին ընթանում աշխարհի գաւաթին տիրելու համար: Վիճակահանութեամբ Հայաստանի հաւաքականին բաժին էին հասել Սկանդինավեան երկրների, Քուպայի եւ Իրանի ընտրանիները: Միւս խմբում ընդգրկուել էին Ռուսաստանի, Թուրքիայի, Վրաստանի եւ Հունգարիայի հաւաքականները: Հայ ըմբիշները տպաւորիչ յաղթանակով սկսեցին մրցաշարը 7-0 հաշուով պարտութեան մատնելով Սկանդինավեան երկրների հաւաքականին:

Հայաստանի ըմբիշները կրկին յաղթանակներ տօնեցին Քուպայի հաւաքականի հետ անցկացրած մրցախաղում: Սակայն քուպացիների հետ մրցալէճն անցաւ աւելի յամառ մրցապայքարում:

Հայաստանի հաւաքականը եզրափակիչի ուղեգրի համար պայքարում ուժերը չափեց Իրանի ըմբիշների հետ: Վերջիններս յաղթել էին Սկանդինավեան երկրների (6-1) եւ Քուպայի (5-2) հաւաքականներին: Այնպէս որ այդ մրցալէճում յաղթողն իրաւունք էր ստանում վիճարկելու աշխարհի գաւաթը: Եզրափակիչ դուրս գալու համար մրցամարտում ՀՀ ըմբիշները 3:4 հաշուով զիջեցին Իրանի խումբին:

Հայաստանի հաւաքականի կազմում հանդէս եկան Ռոման Ամոյեանը (55 կգ), Վահան Զուհարեան (60 կգ), Արման Աղիկեանը (66 կգ), Արսէն Զուլֆալակեանը (74 կգ), Տիգրան Սահակեանը (84 կգ), Արման Գեղամեանը (96 կգ) եւ գերծանր քաշային Եուրի Պատրիկեանը (120 կգ):

## ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ԿԱՆՔՈՒՎՈՐԻ ՉՄԵՌԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ



Քանատայի Վանքուվըր քաղաքում Շաբաթ գիշերը հանդիսաւոր պայմաններում տեղի ունեցաւ 21-րդ ձմեռային օլիմպիական խաղերի բացման արարողութիւնը: 60,000 հանդիսատեսների ներկայութեամբ միջազգային օլիմպիական կոմիտէի նախագահ, պելզիացի ժակ Ռոզգեն Չեմբորէն շնորհաւորեց 52 երկրների մասնակիցներին եւ խաղերի բոլոր հիւրերին օլիմպիադայի բացման առիթով՝ նրանց մաղթելով արդար եւ հետաքրքիր մրցապայքար:

Օլիմպիական խաղերի կրակի վառման արարողութիւնը վստահեց Քանատայի 5 լեզենդար մարզիկներին, այդ թւում՝ հաքիչիստ Ուէյն Գրեցկուն եւ պասքէթպոլիստ Սթիվ Նեշին:

Յիշեցնենք, որ Հայաստանից այս մրցումներին մասնակցում են 4 մարզիկներ՝ դահուկորդներ Քրիստինէ Խաչատրեանը եւ Սերգէյ Միքայէլեանը եւ լեռնադահուկորդներ Անի Սերբերակեանն ու Արսէն Ներսիսեանը: Նշենք, որ խաղերի մասնակիցների շքերթին հենց Արսէն Ներսիսեանն էր Հայաստանի դրօշակակիրը:

### ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*  
**(818) 246-0125**

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

### ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

**ՀԵՌՈՒՍԱՏԵՍԻԼԻ 3ԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ) GLOABCAST SATELLITE ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00**

### ՔԱՉ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30 Կլէնտէյլի 280-րդ կայանից

### REQUEST FOR PROPOSALS (RFP) NO. 7527 RENT REASONABLENESS DATA PROVIDER

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in populating its existing rent comparables database with new data on a quarterly basis. The firms will need to determine the number of rent comparables that will adequately represent fair market rents in the local market and each sub-market area. This number shall allow the Authority to determine reasonable rents for over 40,000 existing Section 8 contracts. The work to be accomplished includes collecting data for the Housing Authority's rent comparable database by conducting surveys of the local unassisted rent market and addressing the characteristics of the units such as unit type, size, location, age, quality, amenities, housing services, maintenance, and utilities. Copies of the RFP may be obtained beginning February 8, 2010 online at [www.hacla.org/ps](http://www.hacla.org/ps). Proposals will be accepted until 2:00 P.M., March 12, 2010.

2/11, 2/18/10  
CNS-1790181#  
MASSIS WEEKLY

### ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

**1060 North Allen Avenue Pasadena, CA 91107**

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով: Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
**(626) 398-0506**

# ՍԻՐԱՆ ԱԼԵՏԻՍԵԱՆ-ՉԱՔԱՐԵԱՆ (Մահուան 40-ՕՐԵԱԿԻ ԱՌԹԻԻ)

Հանգուցեալ Սիրան Ալետիսեանը (հայրական ազգանունով Չաքարեան) ծնուել էր 1919 թուականի Մայիսի 19ին, Ռուսաստանի Տազանրոզ քաղաքում, հայ բարեպաշտ մի ընտանիքի յարկի տակ: Նախնական եւ միջնակարգ ուսումը ստանալով ծննդավայրում, մտադրում է անցնել համալսարան: Սակայն պայմանների բերումով ստիպուած իր աղջկայ Լուսիկի հետ 1938 թուին մեկնում է Իրան եւ հաստատուած Ղազուին (այն օրերին հայաշատ) քաղաքում:



Ալետիսեանը նուիրեալ մի անձ էր, որի ամբողջ կեանքը Ղազուինի հայ գաղութում եղաւ համակ զոհողութիւն, ի նպաստ հայոց եկեղեցու եւ դպրոցի: Արժանաւոր հայ մայր Սիրան Ալետիսեան-Չաքարեանի ցաւալի մահը սգում են իր զաւակները, ազգականները եւ բոլոր հարազատները:

1985 թուին հաստատուելով Քանատա եւ Միացեալ Նահանգներ, վայելեց իր թանկագին զաւակների եւ հոգատար թոռների եւ շրջապատի ջերմ գուրգուրանքը: Յաւօք 2010 թուի Յունուարի 25ին գտաւ իր յաւիտենական հանգիստը, հեռու հայրենիքից: Այս ցաւալի կորուստը սգում են նաեւ աշխարհով մէկ սփռուած ղազուինահայերը: Խաղաղութիւն հանգուցեալի հոգուն:

«Յիշատակն արդարօրց օրհնութեամբ եղիցի»: Ն. Տէրեան

Ղազուինում հանգուցեալը անցնում է աշխատանքի հայկական մի դեղատնում, միաժամանակ մասնակցելով տեղի Հայ կանանց Բարեգործական Միութեան հանրօգուտ աշխատանքներին:

1954 թուին Ղազուինում ամուսնանում է տեղի բարի համբաւ վայելող, ազգային-հասարակական գործիչ, անուանի դեղագործ-բժիշկ Հերոս Ալետիսեանի հետ, որից յետոյ ունենում են երկու զաւակ Արմինէ եւ Արմէն, որոնք աւելի են ջերմացնում նրանց հայկական օճախը:

Հանգուցեալը իր ծնողների, իր սիրելի զաւակների, ամուսնու եւ շրջապատի համար եղաւ օրինակելի մի հայուհի, նուիրեալ մայր եւ զոհաբերող կողակից: Նա օժտուած էր մարդկային բոլոր ազնիւ եւ բարի զգացումներով եւ լաւագոյն յատկութիւններով: Այդ իսկ պատճառով սիրուած ու յարգուած էր բոլորի կողմից: Նրա կեանքի ընկերը՝ Տօքթ. Հերոս

## ՅԱԿԱՅԱԿԱՆ

Խորը վշտով համակուած սգում ենք բարեպաշտ հայ մայր, Իրանի Ղազուին քաղաքի Ս. Հովհիսիմէ եկեղեցու կնքահայր, ազգային գործիչ տօքթ. Հերոս Ալետիսեանի արժանաւոր կողակից Սիրան Ալետիսեանի ցաւալի մահը:

Վշտակցութիւններ սիրելիներ Լուսիկին, Արմինէին, Արմէնին եւ հանգուցեալի բոլոր հարազատներին: Փոխան ծաղկեպսակի 50 տուար նուիրում են «Մասիս»ի ֆոնտին:

Ներսէս եւ Յովհաննէս Բալայեաններ (Տէր Մեսրոպեան)

## ԲԱՆԹՈՒՐԵԻՉԱՐ ԵՐՈՊԱԿԱՆ ՄՈՏԱՅՈՎ

### Շարունակուած էջ 6-էն

մեր յարաբերութիւններու զարգացումը: Տարածաշրջանին մէջ կը բացուին նոր հնարաւորութիւններ համագործակցութեան համար:

Մենք կը ցանկանք, որ Եւրասիայի մէջ համագործակցութիւնը ըլլայ ամենաբարձր աստիճանի վրայ: Մենք կը ցանկանք, հասարակ երկկողմ յարաբերութիւնները դառնան աւելի ընդգրկուն եւ աւելի լայն հնարաւորութիւններով: Նման քաղաքական երկխօսութիւններու մշակման համար յառաջիկային Թուրքիան լուրջ ջանքեր կը ներդնէ:

Պէտք է Սեւեռական տնտեսական համագործակցութեան մեխանիզմներուն աւելի մեծ կարեւորութիւն տալ: Մենք կը ցանկանք, որ այն զարգանայ ոչ միայն տնտեսական, այլ նաեւ քաղաքական համագործակցութեամբ:

«Սահմանները փակեցք եւ մեր մէջ տնտեսութիւնը զարգացնենք» միտքը մնացած է 60-70-ականներուն: Ոչ մի երկիր ներկայիս

առիթներ չունի մեկուսացուած ըլլալու:

Մենք նպատակադրուած ենք, զրօ խնդիր հարեւանների հետ գաղափարը իրականացնել նաեւ Եւրասիայի մէջ: Բոլորի հետ պիտի բարձրացնենք մեր երկխօսութեան մակարդակը:

Եթէ եւրոպական երկիրները իրար հետ չհամագործակցէին, միթէ հիմա այդքան զարգացած կ'ըլլային:

Այսօր միջազգային կառոյց ստեղծելու համար միգուցէ ամենայարմար աշխարհագրական տարածքը Եւրասիան է: Որպէսզի աշխարհի աչքին Եւրասիան նման կերպ երեւայ՝ Թուրքիան իր ջանքերը կը շարունակէ: Թուրքիան այդ տեսլականը իրագործելու համար ձեռքէն եկածը կ'ընէ եւ ոչ մէկ առած քայլէն ետ չի կանգնիր: Այս աշխարհագրական տարածքի ձեւակաւ գիրը մենք որպէս մարդկութեան ճակատագիր կ'ընդունինք»,- նշած է Թուրքիայի արտգործնախարար Ահմետ Դաւութօղլուն:

# ՂԱՐԱԲԱՂԸ ԲԱՆԱԻՈՐ ՊԱՏՃԱՊԻ ԹԷ ԱՌԻԹ

### Շարունակուած էջ 7-էն

Արեւելքը, առանց բացառութեան, պատճառ դառնալով մո'ր խժոժութիւններու, մո'ր աւերներու, մո'ր սպանութեանց, եւ անշուտ բոլորովին մո'ր սահմաններ գծելով երկիրներու, ազգերու ու համայնքներու միջեւ, արդէն իսկ գոյութիւն ունեցող տարակարծութիւնները աւելի ու աւելի խորացնելով:

Սա, պիտի ըլլայ մեր կացութիւնը մը, որ իր դժբախտ ազդեցութիւնը պիտի ունենայ շրջանի բոլոր երկիրներուն եւ ժողովուրդներուն համար: Արդարեւ, պատերազմ հրահրող կողմեր, թերեւ շահադիտական իմաստով սկզբնական շրջանին քաջալերուին, ոգեւորուին ու ծրագրեն, բայց երկրորդ անգամ մտածելու պարագային հաւանաբար համոզուին՝ թէ տան հաշիւը պիտի տարբերի շուկայի հաշիւէն... որ կրնայ դիւրին սկիզբ ունենալ, բայց վախճանը կանխատեսելի՝ անկարելի է, չըսելու համար կրկնակիօրէն աղիտալի՝ աներեւակայելիօրէն, որ պիտի հրդեհէ Կովկասէն մինչեւ Միջերկրական ծով երկարող շղթան՝ անխնայաբար... իր կրակին մէջ հրկիզելու համար շատ մը երկիրներ, մաւ ժողովուրդներ, թերեւս ալ այս իրարանցման մէջ ստեղծելու համար «միքո պետութիւններ»...:

Վերջերս, թէ՛ Միացեալ Նահանգներու եւ թէ՛ Եւրոպական կարգ մը դիւանագետներու բերնէն դիւրին կը հնչուի Կովկասէն մերս

Հայաստան-Ատրպէյճան բռնկումի մը նախատեսութիւնը... զարմացնելով մոյմիսկ քաղաքականութեան որոշ մուտքերը:

Պարզ է, որ սկզբնականում ու պատերազմի պատճառով միջազգային շահի հետապնդող կողմեր, չեն կրնար հանգիստ պտուկի ու քննալ, երբ խաղաղութեան կոչեր կ'արձակուին, ու մասնաւորապէս կրակը բռնու է իրենց քիթէն անդին...: Բայց ի վերջոյ, ուշ կամ կանուխ, անոք պիտի համոզուին, թէ մամ կացութեան մը դիմաց, ապահովաբար «չոր» կողքին պիտի աչրի մաւ չկանխատեսուած ու չմտածուած «թաց»ը... լուրջ զարմանք պատճառելով հրահրիչներուն... որոք որպէս կնքահայր կորսնցնեն իրենց «սանուկ-ներուն» վստահութիւնը:

Բայց այս պարագային... վստահաբար վերջին զոյնը օգուտ պիտի չունենայ դարմանելու համար կորսուած կամ քանդուածը...: Այլ խօսքով, ի՞նչ արժէք պիտի ներկայացնէ «մատ խածնել»ը... երբ կորուած ու անդամահատուած է թելը...:

Եզրակացնելով, պիտի ըսենք, թէ այսօր աշխարհ կարիքն ունի ոչ թէ տաք գուլիս, կովարած ու բախտախնդիր, այլ խոհեմ ու իմաստուն քաղաքական դեկավարներու, առաջքը առնելու համար բազում դժբախտութեանց... որոնց ոտնաձայները սկսան լսելի դառնալ վերջերս...: Արդեօ՞ք կը յաղթէ իմաստութիւնը: Տեսնենք...:

## ԱՍՏՈՒԾ ԵՒ ԱՐՈՒԵՍ

### Շարունակուած էջ 14-էն

արիւնուշտ մեղքերուն համար: Անմեղ մարդու արեան հեղումը, ոճիրներուն ոճիրն էր, մեղքերուն մեղքն էր, որ չէր ներուեր...: Աններելի ի՞նչ մեղսաթաթաւ արարքներ չէր գործեր պատերազմը...:

Շունչերնիս բռնած, կծկուած տան մէկ անկիւնը, վերահաս ամէն վտանգ աչքերնիս առած, ահ ու դողով սպասեցինք: Խռովալից եւ տանջահար սպասումը մինչեւ երեկոյ տեսց: Լուսթիւն իջաւ: Յանկարծ զգացինք, որ զինական որոտումները դադրած են: Դժոխային օրուրնէ մըն ալ փրկուած էինք...:

Քանի մը օրէն դպրոցները վերաբացուեցան: Վերադարձանք դպրոց: Առաջին հերթին ստուգեցինք, թէ զինեալները, որոնք խուժած էին դպրոց, դիրք բռնելու կա՞ջք որպէս օգտագործած էին, թէ ոչ՞ գողութիւններ ըրած...:

Իսկոյն հաստատեցինք, որ գողութեան համար խուժած են...: Տնօրէնութեան գրասենեակի զգրոցները կտրտելով բացած եւ ընթացիկ ծախսերու համար ի պահ դրուած գումարները, - որ բարեբախտաբար մեծ չէին, - թալանած: Ինչ պարզամտութիւն էր իմս, որ սենեակս ձգած պահուս, չէի մտածած գումարները միասին վերցնել: Գումարէն աւելի ցաւեցայ Գրադարանի սրահէն վերցուած եւ տարուած 24 հատոր ամերիկեան հանրագիտարաններուն համար, որոնք աշակերտներուն կողմէ դպրոցի 60-ամեակի առիթով հանրանկուած գումարներով նուէր եղած էին: Աշակերտներուն 60-ամեակի նուէրը: Կողպտուածին նիւթական արժէք չէր միայն զայն թանկագին դարձ-

նողը, այլ՝ այդ նուէրին մէջ դրուած ոգին, որ գրադարանը կ'արժեւորէր...: Այդ ոգին էր, որ յափշտակած էին յելուզակները:

Թալանչիներու աչքէն վրիպած էր բարեբախտաբար սրահը, ուր տեղաւորուած էին Փօլ Կիրակոսեանի Մայրիներու Արմատներէն ներչնուած գեղանկարներ: Հակառակ, որ քանի-քանի անգամներ երթեւեկած էին սրահին առջեւէն: Անկասկած, որ պիտի չխնայէին Մայրիներու Արմատները, մայրիներու արմատները պաշտպանելու համար կռուի սկսած զինեալները...: Շունչ առինք, երբ բանալով սրահին դուռը, տեսանք որ եղածին պէս կը մնային անոնք...:

Ինչո՞ւ չէին համարձակած հոն մտնել: Ոգեղէնին հետ նիւթական մեծ հարստութիւն կայ: Ի՞նչ պատասխան ու բացատրութիւն պիտի տայի Փօլ Կիրակոսեանին...:

Պատասխանը սուաւ արուեստագէտը, որ ոչ մէկ բանէ տեղեակ, եկաւ շաքաթ մը ետք, գեղանկարները փոխադրելու:

- Գիտե՞ս Փօլ, ինչ հրաշք պատահած է, - ըսի եւ պատմեցի զինեալ-յելուզակներու դպրոց խուժումը, կատարած թալանը, որոնք սակայն ցուցահանդէսի սրահը չէին մտած...:

- Հրաշք արուեստին հրաշքն է, - ըսաւ Փօլը, համակրելի ժպիտով մը, որ իր դէմքի արտայայտութեան ոճն էր, եւ աւելցուց-Հոն ուր արուեստը կայ, Աստուած ներկայ է: Աստուած եւ արուեստ միաձոյլ են: Անոնք չեն համարձակած Աստուծոյ վախէն արուեստի տաճարէն ներս մտնել...:

Արդարեւ, ուրիշ մեծ նկարիչներու պէս, Փօլ Կիրակոսեանն ալ հաւատացեալ նկարիչ էր...:

# ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ 10 ՀԱՍԱՐԱԿ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ



ԸՆԴԱՄԵՆԸ 10 ՊԱՐԶ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՎ՝  
ՄԵՆՔ և ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԸ ՁԵՆՔԻ ԿԲԵՐԵՆՔ.

- ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ
- ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ
- ԱՎԵԼԻ ԼԱՎ ՓՈԽԱԳՐԱՄԻՋՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Մարտ ամսին մեզանից յուրաքանչյուրը թերթիկ կստանա: Այդ թերթիկը առնչվում է Միացյալ Նահանգների առաջիկա մարդահամարին: Մարդահամարին մասնակցելը չափազանց կարևոր է, քանի որ դրանից կախված կլինի մեր ապագան: Մարդահամարի թերթիկը Ձեր իրավական կարգավիճակի, կրոնի, ինչպես նաև անձնական կյանքին վերաբերող հարցեր չի պարունակում: 2010 թվականի մարդահամարին ավելի մանրամասն ծանոթանալու համար այցելե՛ք [2010census.gov](http://2010census.gov)

ՈՒՐԵՄՆ ՊԱՏԱՍԽԱՆԵՔ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԹԵՐԹԻԿԻ 10 ՀԱՍԱՐԱԿ  
ՀԱՐՑԵՐԻՆ, ՓՈՍՏՈՎ շԵՏ ՈՒՂԱՐԿԵՆՔ և ԲԱՐԵԼԱՎԵՆՔ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ:

**United States  
Census  
2010**

ԱՄՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ-2010

ԱՄՆ ՄԵՐ ՁԵՆՔՈՒՄ Է: